ԱՐԶԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ | № 16 | ԿԻՐԱԿԻ 30 ՅՈՒՆԻՍԻ 1891

Ներկայ 1891 թ. Մարտից մինչև 1892 Յունվարի 1 ը բաժանորդագրվելն է ՈՒԹ Ը ռուբլի կամ 30 ֆրանկ։ Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը՝ Թիֆլիզ Վէլիամինովսկի փողոց, բաղաբային Խորհրդատան հանդէպ։ Ուրիշ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, Редакція Армянскаго Иллюстрированнаго журнала „АРДЗАГАНКЪ". Ռեդակցիայի՝ Tiflis, Rédaction du journal arménien illustré „A R D Z A G A N G"

Առանձին համարի գինը 30 կ. Յայտարարութեան բաւին 4 կ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։—Տեղական թէ կաթուղիկոս։ Դարձեալ պ. Իր. Երծրունին և նրա իրաւաբանական հայեացքը։ Հասարակական պաշտօնավարութիւն և պաշտօնավարներ։ ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։—Դպրոցական ճանապարհորդութիւն։ «Հայր մերը» 300 լեզուներով։ Կոստանդին Կամսարական։ Վիկտոր Հիւգոյի «Ծաղուած» քերթուածը։ Տէրտէրեան մի կարգադրութիւն։ «Կովկասում ուղղափառ քրիստոնէութիւն տարածող ընկերութիւն»։ ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ։ Լուրեր Կ. Պօլսից։ ՏԱՃԿԱՍԱՆ։ՀԱՅԱՍՏԱՆ։—Տրապիզոն։ Զմմրնայում։ Գաղթականութիւն Ամերիկա։ Երիւնահեղ կռիւ երուսաղէմի մէջ։ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ։—Սուլտուզ գաւառ։ Հայեր ի Պուշիր։ ՄԵՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ։—Հինգ տեսակ օրացոյց, հրատարակութիւն «Ողբերգի» և «Տարագի»։ ՄԵՐ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ։—Յաւերժահարսի վիշտը։ ԶԱՆԱԶԱՆ։ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՏԵՂԱԿԱ՞Ն ԹԷ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

—

Վերջին ժամանակներս «Մշակ» թերթը սաստիկ հետաքրքրւում է եկեղեցական կրօնական խնդիրներով. այն թերթը, որ Ամենայն Հայոց Կաթուղիկոսի մահացուցակը չէր տպում, որպէս զի մահմէդական հայերը չը վիրաւորուեն, այժմ ընդարձակ էջեր է նուիրում կաթուղիկոսական տեղական ունեցած և չունեցած իրաւունքների։

Որ և է վէճի և կամ առհասարակ կռուի ժամանակ հայհոյել, ազազակներ և արտաուսախառն ճաղը արձակել յատուկ է յաղթուող և թոյլ կողմին, այդ դիտէ իւրաքանչիւր մանուկ։ Ճիշդ այս վիճակի մէջ է և «Մշակը», վաստերի պաշարըն ապառելուց յետոյ կեղծ մեղադրութեանց է դիմում։

«Մշակ» լրագրի կարծիքով հայ եկեղեցին կաթուղիկոսի մահուանից յետոյ

ՇԱՐԼՈՏ ԴՈՐԴԷ *)
ՄԱՐՏԻՆ ՍՊԱՆՈՂ

*) Սորա կենսագրութիւնը յաջորդ համարում կը տպուի։

կառավարւում է ժամանակաւոր խորհրդով։ Այսպիսի կարծիք կարող է յայտնել միայն այնպիսի մի թերթ, որ հայ եկեղեցին ազատ կուզեց, որովհետև եկեղեցական նուիրապետութեան մասին այդ օրինակ վարդապետութիւն ունեցող մի եկեղեցի իրաւ ազատ չէ։ Ամենատգէտ հայ քրիստոնեան անպատճառ գիտէ, որ ձեռնադրութիւնը եկեղեցու սուրբ խորհուրդն է, որի միջոցաւ միայն և եթ կարելի է եկեղեցական որ և է աստիճան ստանալ՝ սկսած տիրացութիւնից մինչև կաթուղիկոսութիւն. ուրեմն ինչպէս որ ժամանակաւոր սարկաւագ, քահանայ, վարդապետ չը կայ և չէ կարող լինել առանց ձեռնադրութեան, այնպէս էլ չէ կարող ժամանակաւոր կաթուղիկոս լինել առանց ընտրութեան և ձեռնադրութեան։ Առհասարակ ամեն մէկը հօրից սուրբ խորհուրդներից ուրեմն և ձեռ-

նպատակը սուրբ Հոգու շնորհքն է ներզործում և այդ ներգործութիւնը չէ կարող ժամանակաւոր լինել. ինչպէս չը կայ քրիստոնեայ եկեղեցու մէջ ժամանակաւոր մկրտութիւն, պսակ և այլն, այնպէս էլ ժամանակաւոր եկեղեցական աստիճան չը կայ։

Ճատ պարզ է ուրեմն, որ ձա՝ան՝ա՝ա՝ա՝ր չա՛ն՝ա՝ա՝ր խօսքն անդամ ըստ եկեղեցական վարդապետութեան ազանդաւոր ա-ատյատած է. արդ ինչ է կամենում «Մշակը» իւր ժամանակաւոր կաթուղիկոսով։

«Մշակի» կարծիքով Կաթուղիկոս և կամ մի որ և է քաղաքական իշխանաւոր համեմատելի մեծութիւններ են, մինչդեռ մեր վերևում յիշած սկզբունքով ոչ մի պաշտօնեայ չէ կարող համեմատուել Կաթուղիկոսի և կամ առհասարակ որ և է եկեղեցական պաշտօնէի հետ։ Եկեղեցու պաշտօնեան ստանում է իւր պաշտօնը ձեռնադրութեան միջոցով և Սուրբ Հոգու ազդեցութեամբ, իսկ քաղաքական պաշտօնէին նշանակում է աշխարհական իշխանութիւնը։ Համեմատել այսպիսի երկու անհամեմատելի մեծութիւնները՝ նշանակում է չընչին տրամաբանութիւն և կամ կեղծել ուրիշներին խաբելու համար։ Այսպիսի պատրոլութեամբ հանուած եզրակացութիւնները տրամաբանութեան մէջ յայտնի են կեղծ եզրակացութիւններ անունով և այդ դիտէ ամեն մի ուսումնարանի աշակերտ։ Չնայելով խնդրի այսպիսի պարզութեան, «Մշակը» իւր յունիս 25-ին համարում Կաթուղիկոսին համեմատում է երկրիս կառավարչապետի հետ, այսինքն մոլորեցնել է աշխատում իւր ընթերցողներին։

Եթէ կաթուղիկոսը իրրև քահանայապետ միայն յաջորդ կարող է ունենալ և ոչ փոխանորդ, այդ ապացուցուցեցինք, մբնում է այժմ որոշել, թէ ո՞վ է նրան փոխանակում վարչական գործերում մահուանից յետոյ մինչև յաջորդի ընտրութիւնը։ Այս էլ պէտք է որոշէ դարաւոր սովորութիւնը և դրական օրէնքը։ Օրէնսդրութիւնը չէ ճանաչում կաթուղիկոսի փոխանորդ և յայտնի կերպիւ արգելում է իսկ Կաթողիկոսին որ և է անձի յանձնել իւր իշխանութիւնը, վառք Աստուծոյ, որ այս գոնէ ընդունում է «Մշակը». իսկ ինչպէս է արդեօք սովորութեան օրէնքը։

«Մշակի» համար ամեն խնդիր սկսում է անձնական տեսակէտից և իրեն կարեւոր ժամանակ, ապացոյց դրան հէնց այս իսկ խնդիրը, որ դոյութիւն չունէր Գէորգ Կաթուղիկոսի մահուանից յետոյ, երբ «Մշակը» հրատարակւում էր։ Սրդ ինչու այժմ կարևոր եղաւ այս խնդրի յարուցումը և յեղաշրջումը, դրան պատասխանում է ինքը «Մշակը» ասելով, որովհետև այժմեան տեղակալը էմ Բարխուդա Բարխուդա է։

Հայոց եկեղեցին այնքան դար դոյութիւն ունենալով՝ ժամանակաւոր կաթուղիկոս չէ ճանաչել, եթէ կարևոր է եղել մինչև անդամ, որ Կաթուղիկոսի կենդանութեան ժամանակ մէկ ուրիշը կառավարէ եկեղեցին, այն ժամանակ հինը նոր Կաթուղիկոս է ձեռնադրել իւրեան կենդանութեան ժամանակ, յիշենք միայն Վկայասէր կոչուած Կաթուղիկոսի դէպքը, որ ինքը երկար ճանապարհորդութեան դնալով, իւր տեղը ուրիշին ձեռնադրեց Կաթուղիկոս։

«Ցեղակայութիւն» կոչուած պաշտօնը համապատասխան է «վանահայրութեան», որովհետև կաթուղիկոսը նոյն ժամանակ և վանահայր է ուրը Էջմիածնի Վանքն, ուստի երբ նա Վանքից բացակայում է, աւագագոյն անդամը միաբանութեան դառնում է վանահօր տեղակալը։ Այդպէս է եղել մեր պատմութեան ամբողջ ընթացքում, այդպէս է նաև բոլոր քրիստոնեայ եկեղեցիների վանքերում, այդպէս էր և ս. Էջմիածնում մինչև այսօր, և այսօր իսկ այնպէս կը մնար, եթէ դաղտնի դիտաւորութիւններ ունեցող անձինք դիտմամբ չը սխալեցնէն իրեանց մեծաւորներին։ Նոյն իսկ այժմեան տեղակալ Սրբազանն էր, որ Կաթուղիկոսի մահուանից յետոյ, ժողովեց միաբանութեան աւագագոյն անդամներին և երդումն տուաւ և առաւ, որ ամենքը համաձայնութեամբ պիտի պահպանեն Հանգուցեալ Կաթուղիկոսի բոլոր կարգադրութիւնները և ոչինչ պիտի չի փոխուի մինչև յաջորդի դալը։

Եթէ մեր սուրբ եկեղեցու դոյութիւնը երեկուանից սկսուէր, այն ժամանակ կարող էին տեղի ունենալ այդպիսի խնդիրներ, սակայն 15 դար դոյութիւն ունի նա և երբէք այդպիսի սխալ դործուած չէ, թէև երբեմնակի ոտնձգութիւններ եղել են, բայց ամեն անդամ եկեղեցին պատժել է ոտնձիդ եղողներին։

Կաթուղիկոսի մահուանից վերջը վանքի միաբանութիւնը ճանաչում է աւագագոյն եպիսկոպոսին վանահայր, որ վայելում է վանքի մէջ միայն արբայի իրաւունքներ և այն էլ սահմանափակ. օրինակ՝ նրա օրով նոր միաբան չէ ձեռնադրւում, և թէ այդպիսի դէպք պատահում է, մինչև յաջորդ Կաթուղիկոսի դատաստանին է մնում նրա հաստատութիւնը։

Յայտնի է, որ նոյն իսկ Կաթուղիկոսի կենդանութեան ժամանակ վարչական գործերը վարում է Սինօդը, որ ունի դատաստանական, կառավարչական, և այլն բաժիններ։ Կաթողիկոսի մահով Սինօդի իշխանութիւնը չէ կարճւում, այլ նոյնն է մնում, միայն թէ նախագահն է փոխւում, իսկ մի կոլէդիալի նախագահ առանց ժողովի վճռի երբէք սրևէ գործ ինքնագլուխ անել կարող չէ, այդ դիտէ մինչև անդամ պ. Արծրունին։

Միմիայն անձնական տեսակէտը և շահասէրութեան ստոր սկզբունքը կարող է ուրանալ այսպիսի ճշմարտութիւն։

Այն գործերը, որ այժմ Սրբազան տեղակալին կատարել են տալիս անձնիշխանաբար, դեռևս ինքը տարի առաջ կատարում էր Սինօդը։ Գէորգ Կաթուղիկոսի մահուանից յետոյ Սրբազան տեղակալը չէր ճեմարանի խումբը արձակողը, այլ Սրբազան Սինօդը, և այս անդամին էլ երբ տեղակալի թոյլտուութեամբ արձակուեցան ուսուցիչները, նրանք բողոքեցին Սինօդին և Սինօդն ընդունեց այդ բողոքը ինչպէս իրեն վերաբերեալ։ Ինչ վերաբերում է «Մշակի» այն սովորութեան, թէ մերթ տեղակալը պէտք չէ արձակէ վնասակար ուսուցչին և լրացնէ Սինօդի մեռած անդամների թիւը, կը պատասխանենք որ թէ Կաթուղիկոսից հաստատուած ուսուցիչը վնասակար էր տարիների ընթացքում, նա եթէ մի տարի էլ մնայ այնքան մեծ վնաս չի լինել և վերջապէս նրան միշտ իրաւունք ունի Սինօդը արձակելու յայտնի յանցանքի համար և ոչ թէ կամայականութեամբ։ Ճեմարանից հեռացող ուսուցչայ ներկայութեամբ իսկ Սրբազան տեղակալը յայտնել է. «ի՛մ յա՛ռ-ջի՛-ա՛ռ էր ա՛ն-ն-այ՛ն ի՛նչ պա՛հել ա՛ն-ի-ի-ո՛ի՛ն ՏԱՆՏԻՐՈՋ գա՛-ո՛-ո՛ր-ծը, ո՛չ ի՛ա՛-ո՛-ո՛-ն և ի՛-չ-ի՛-ա՛-ո՛-ն-ի՛-ա՛ն էր այնուհետև իւր հաճութեամբ տնօրինել ամենայն ինչ, բայց դժբաղդաբար այդպէս չեղաւ...»։

Սինօդի անդամների առաջարկութեան մասին «Մշակի» յայտնած կարծիքը նոյնպէս կեղծած է, որովհետև Սինօդի անդամներից ոչ ոք մեռած չէ, այլ նորանոր թիւն այնքան է, որքան Կաթողիկոսի

կենդանութեան ժամանակ էր, և առհասարակ Սինօդի հաստատութեան օրից անդամների թիւը լրացած չէ եղել, ուրեմն ինչ կարիք կար դեռ Կաթուղիկոսը դադաղում նոր անդամներ առաջարկել, ասել է, որ ոչ եթէ կարիքն էր ստիպում, ինչպէս ճգնում է ցոյց տալ պ. Ֆ. Ա. այլ մի ուրիշ հանգամանք: Այս պատճառաբանութիւնն իսկ եթէ ճշմարիտ լինէր, իրաւունք չունէր ոչ ոք՝ բացի Կաթուղիկոսից անդամներ առաջարկել Սինօդի, ենթադրենք անգամ, որ անդամների թիւը minimum-ի հասնէր, դարձեալ մինչև Կաթուղիկոսի յաջորդ ընտրութիւը կարելի էր գործերը վարել: Սինօդի անդամ պէտք է և կարող է միմիայն Կաթուղիկոսն առաջարկել թէ ըստ օրէնսդրութեան և թէ ըստ եկեղեցական տեսակէտի, որովհետև Սինօդը Կաթուղիկոսի խորհրդատու մարմինն է և չէ կարելի մէկին առաջուց այնպիսի խորհրդատու մարմին տալ, որի խորհուրդները նա չէ կարող իսկ լսել:

Մենք համոզուած ենք, որ այս խընդիրները եթէ աշխարհական անձանց համար այնքան որոշ չէ, եկեղեցականների համար շատ պարզ է, թէ Սրբազան Սենօդը և թէ Սրբազան առաջնորդները գիտեն, թէ ով ինչ իրաւունքներ ունի. մենք չենք էլ կամենում հաւատալ, որ Սրբազան տեղակալը չը ճանաչէ իր իրաւունքների սահմանը և լսէ այնպիսի խորհրդատուների, որոնք լ—ոյրջ և պէշչէ խառնում են, որովհետև իրենց կեանքում այդ երկու բառն էլ առաջին անգամն են լսում և պատահմամբ այդ երկու պաշտօններն մի անձի ձեռին են այսօր: Ամեն մի տիրացու գիտէ, թէ ինչ կը նշանակէ լ—ոյրջ, այսինքն եկեղեցու ծէսերը վ—ոյղ, լոյս անող. Ծխական եկեղեցիներում լուսարարը սարկաւագն է, իսկ վանքերում հին վարդապետներից մէկը: Սուրբ Էջմիածնի լուսարարի պաշտօնն էլ նոյն է, նա է եկեղեցու մաքրութեան և կարգապահութեան հսկողը, բայց լուսարարը միշտ տեղակալ չէ: Ինչո՞ւ ենք շատ հեռու գնում, սրանից մի երկու տարի առաջ տեղակալ էր Հանդուցեալ Թադէոս եպիսկոպոսը իբրև աւագադոյն անդամ միաբանութեան, մինչդեռ լուսարարն էր Ե-րեմիա Սրբազանը, որի լուսարարութեան ժամանակ տեղակալ են եղել բարձր Սրբազան Բաբամեանը և Մակար արքեպիսկոպոսը:

Ահա թէ ով է անձնականով հետաքրքրուողը և ամեն խնդիր անձնական տեսակէտով վճռողը. այն մարդը, որ հասարակ ժամկոչի չափ էլ չէ ճանաչում եկեղեցու աստիճանաւորներին, այսօր Հանդէս է գալս եկել և ապացուցանում է, որ լուսարարը eo ipso տեղակալ է, իսկ տեղակալը կաթուղիկոս: Ահա թէ ուր կարող է մարդուս կոյր կուսակցական ոգին տանել:

Ամփոփելով մեր տառածները, տեսանք, որ Կաթուղիկոսի մահուանից յետոյ նորան վերաբերեալ ընդհանուր վարչական գործերը վարում է Սինօդը, վանահայրութիւնը անցնում է տեղակալին, իսկ լուսարարութիւնը ոչ մի կապ չունի տեղակալութեան հետ, թէև լուսարարը դէպքի բերմամբ և տեղակալ կարող է լինել:

Եկեղեցին մարդու շինուածք չէ, որ մարդու ձեռները քանդել կարողանան այն, ասում է Եղիշէն. յոյս ունինք, որ անիշխանութեան ժամանակներում էլ կը գտնուին եկեղեցու իրաւանց նախանձախընդիրներ, որոնք կը մաքառեն ամեն ոտնձգութեանց դէմ և անարատ կը յանձնեն այն տաճուտիրօջը, ինչպէս ցեղակալ Սրբազանի սկզբնական ցանկութիւնն իսկ էր. ապա թէ ոչ արդէն գայթակղութեան քարը ձգուած է և արտաքսմանեան հայ թերթերն իսկ սկսում են բողոքել կաթուղիկոսական իրաւանց ոտնհարութեան դէմ:

Տ—ոեոյէ

ԳԱՐՁԵԱԼ Գ. ԳՐ. ԱՐԾՐՈՒՆԻՆ ԵՒ ՆՐԱ ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑՔՆԵՐԸ.

—

Գ. Գրիգոր Արծրունին ի շարս իւր բազմաթիւ արժանաւորութեանց ունի և երկու առանձնակարգ արժանաւորութիւններ: Առաջին՝ որ նա ընդունակ է յարուցանել այնպիսի խնդիրներ, որոնց մասին ամենքը մի ատեան ապատութեամբ չեն կարող խօսել. «ապատամիտ» խմբագրի այդ յատկութեան մասին ես շատ տարիներ առաջ խօսել եմ մի այլ լրագրում, գարձեալ մի նուրբ խնդրի առիթով, որ բարձրացրել էր պ. Գրիգոր Արծրունին: Եւ երկրորդ՝ որ նա գործանալի համարձակութեամբ իր հակառակորդներին վերագրում է գանազան պակասութիւններ, օրինակ՝ կոմնատակութիւն, կուսակցական ոգի և այլն, որոնք իրեն պ. Արծրունու մէջ վաղուց է որ մարմին և արիւն են դարձել: Եթէ պ. Արծրունին չդեկավարէր այդ կուսակցական և այլն ոգով, մի՞թէ նա կը յարուցանէր «ժամանակաւոր կաթուղիկոսութեան» հարցը. կամենում ենք ՚ի պատիւ պ. Արծրունու տրտամաբանութեան կարծել—թէ ոչ:

Գ. Արծրունին իւր լրագրի յունիսի 25-ի համարում նորից խօսում է ժամանակաւոր կաթուղիկոսութեան մասին կամ աւելի ճիշտ ասած վարչական «ապմինիստրատիւ կաթուղիկոսի» մասին. այս նոր կոչման գիւտը պատկանում է «ապատամիտ լրագրին». բայց որովհետև պ. Արծրունին իւր տակից գետինն արդէն կորցրել է, նա ուրիշ աշխարհից վերցրած օրինակներով է ուզում ապացուցանել իւր ապարդիւ միտքը: Այդ օրինակների ՚ի դէպ լինելը կամ չլինելը մենք չենք քննիլ. կարծում ենք որ պ. Արծրունու տրտամաբանութիւնն աւելի երդիճաբանութեան նիւթ կարող է կազմել, քան թէ մի լուրջ յօդուածի առարկայ:

Եթէ մենք նորից գրիչ վերցրինք, այդ ոչ լաէ նրա համար որ պ. Արծրունուն մի բանի մէջ համոզենք: Գր. Արծրունին քաջ գիտէ, որ նա սխալ ընթացք է ընդունել—բայց նորան այդ հարկաւոր է և նա ոչինչ դժուարութիւն չէ տեսնում ամենայն ինչ տակն ու վրայ անել pour les besoins de la cause. մենք դիմում ենք «Մշակի» ընթերցողների այն մասին, որ ընդունակ է աւելը սիպտակից զանազանել:

Ամենայն իշխանութիւն ունի իւր ազբիւրը. այդ ազբիւրն է կամ աւանդութիւն կամ դրական օրէնսդրութիւն: Դրական օրէնսդրութիւնը չէ ընդունում «տեղակալութիւն», նա չէ ընդունում և «ՀԱՅՈՑ ԱՊՏՈՍՏՈԼԱԿԱՆ ՀԱՐԱՆԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ»: Որովհետև «Պալաժենիան» հիմնած է հայոց եկեղեցու աւանդութեանց վերայ, որոնց սահմանները տուած ռուսաց վիհապետները, իսկ աւանդութիւնն ընդունում է «տեղակալութիւն», հետևաբար ըստ աւանդութեան «տեղակալ» կարող է համարուել Սինօդի նախանդամը, եթէ նա հայրապետական կոնդակով նշանակուած լինէր տեղակալ: Քանի որ Սինօդի այժմեան վերատեսիչ նախանդամը չէ նշանակուած որպէս «Տեղակալ», ուրեմն նա մնում է միայն իբրև Սինօդի նախանդամ, հետևաբար ժամանակաւոր

նախագահ։ 945 յօդուածը չէ խօսում ժամանակաւոր կամ վարչական կալուղիկոսի» մասին. այդ յօդուածը բոլորովին հակառակ է պ. Արծրունու տրամադրութեանց։

945 յօդուածով «Պատրիարքը՝ իւր ժամանակաւոր նախագահի ատենապետութեամբ վճռել որևիցէ կրօնական հարց։ Այդ գործունէութիւնը գործադրում է «Պատժենիան» հետևեալ պատճառներով՝ ա) Սինօդին տուած է իշխանութիւն կարծիք յայտնելու կրօնական խնդիրներում խորհրդատու իրաւունքով. իսկ սոցա վերաբերական իշխանութիւնը պատկանում է Պատրիարք—Կաթուղիկոսին (յօդ. 940). բ) Սինօդի նախագահն է Վեհափառ Կաթուղիկոսը (յօդ. 936). գ) միմիայն Կաթուղիկոսը բացակայութեան կամ մահուան ժամանակ նախագահում է աւագ անդամը (յօդ. 945) և դ) որ Սինօդը իւր այդ ժամանակաւոր նախագահին չը ճանաչէ այն իրաւունքներով, որ ունի Սինօդի հաստատուն նախագահը ոչ իրրև նախագահ այլ որպէս ծայրագոյն Պատրիարք և Կաթուղիկոս Ամենայն Հայոց, և այսպէս ուրեմն, Սինօդը չթոյլ տայ իրեն վճռել կրօնական խնդիրները... 945 յօդուածը ասում է. «Սինօդի աւագ անդամը վայելում է նախագահի բոլոր իրաւունքները, միայն այն հանգամանքում, երբ Պատրիարքը ինքը չէ կարող ներկայ գտանուիլ՝ հիւանդութեան կամ Ս. Էջմիածնից բացակայութեան պատճառով. բայց բուն կրօնական գործերը, որոնց մէջ Պատրիարքն ունի վճռողական ձայն, ոչ մի հանգամանքում չէն կարող վճռուել (не могутъ быть рѣшимы) առանց Պատրիարքի՝ երբ թեմական է Պատրիարքական գահը. այդ տեսակ գործերի վճիռը յետաձգւում է մինչև նոր Պատրիարքի նշանակութիւը։»

Մեր հաստատութիւնը թէ 915 յօդուածն արգելում է Սինօդին վճռել կրօնական խնդիրներ, ապացուցանվում է բացի վերևը ասածներից և նորանով, որ 945 յօդ. զետեղուած է «Պոլոժենիայի» այն դլխում, որ խօսում է Սինօդի վերայ, և յօդուածի խմբագրական դարձուածներից պարզ երևում է թէ արգելքը դրվում է Սինօդի վերայ, երբ ժամանակաւորապէս գտանվում է աւագ անդամի նախագահութեան ներքոյ։

Գ. Ե—ան—ե—ն։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՇՏՕՆԱՎԱՐՆԵՐ։

—

Վերին աստիճանի բարդ և ծանր գործ է մեր ժամանակներում հասարակական պաշտօն վարելը, որովհետև վերին աստիճանի բարդ է հասարակական գործը։ Կեանքը մեզանում հետզհետէ բարդանում է և այսօր իսկ արդէն այնքան բարդացել է, որ հասարակական գործ վարողը, կամ այսպէս ասած՝ հասարակական պաշտօնավարութեան թիկնաձուն պիտի այնքան զարգացում, այնքան կրթութիւն, այնքան ընդունակութիւն և տաղանդ ունենայ, որ կարողանայ ամեն մի քայլափոխում ամփոփել ընդհանուրի պահանջը, նորա բարդ ձգտումները, այն սկզբունքները, որով մեր ժամանակներում ապրում է ամբողջութիւնը։ Պարզամտութիւնը կամ միամտութիւնը, որ մի մեծ յանցանք չէ հասարակ մահկանացուի համար, կրկատնայ մի մեծ յանցանք, մահացու մեղք հասարակական գործիչի համար, որովհետև նորա պարզամտութիւնից ամեն տեղ օգուտ կը քաղեն ի վնաս այն բարդ շահերին, որոնց պաշտպանութիւնը յանձնուած է պարզամիտ հասարակական գործիչին։

Մեզանից շատերը կարծում են, որ եթէ մէկը զող չէ, վատնող չէ, խարպախ չէ, կաշառակեր չէ... այսինքն չունի այդպիսի բացասական յատկութիւններ, նա արժան է և իրաւունք ունի ամեն տեսակ հասարակական պաշտօն վարելու, ամենատորից մինչև ամենաբարձրը։ «Ֆիքրաղդաբար, — ուղիղ է ասում «Վեստնիկ Եվրոպի» հրապարակախօսը, — միայն արտաքին ազնուութիւնը բաւական չէ կեանքի բարդ գործերը վարելու համար։ Հարկաւոր է բացի դորանից ընդունակութիւն, տաղանդ, մտքի ստեղծագործական այժ, որ կարողանայ ըմբռնել կեանքի կանոնները ճապաձ և ծաղելի շահերը և նոցա դեկավարել։ Միայն արտաքին ազնուութեամբ մեր ժամանակներում շատ հեռու չէ կարելի դնալ։ Մեզանում այսօր էլ դանւում են պարզամիտ հասարակական գործիչներ, որոնք այնպիսի վնասակար մաքեր են ոկսում քարոզել, որ երբ վաղը մէկը սկսէ բացատրել, թէ ինչ սարսափելի հետևանքներ կարող է առաջ գալ նոցա քարոզածից, նորանք իրենք կրսարսափին իրենց ասածից։ Սակայն ինչ մեզ ունի հասարակութիւնը, որի շահերը պաշտպանողներն այդ աստիճանի միամիտ, անընդունակ և անտաղանդ են։

Կրկնում ենք՝ անցել են այն ժամանակները, երբ բաւական էր համարում, որ հասարակական գործիչը միմիայն ազնիւ լինի։ Մեր ժամանակում նորանից պահանջում է այնպիսի հեռատեսութիւն, այնպիսի խոր հասցողութիւն ժամանակի պահանջի, շրջակայ պայմանների և հասարակական գործավարութեան, որ բացի ազնուութիւնից ուրիշ դրական յատկութիւններ է հարկաւոր։ Հասարակական գործիչը ամեն մի քայլափոխում այդ բարձրութեան վրայ պիտի լինի։ Նա կարող է, յայտնի բան է, ճակատամարտել կեանքի ամենամանր վէճերում, սակայն նա երբէք չէ կարող մոռանալ իւր դիրքը, որի տեսակէտը, սկզբունքը նա երբէք չէ թողնում, այլ նորա ղէնքով և նորա զրահներով նա իջնում է մանր վէճերի ճակատամարտը։

Մի յատկութիւն ևս ամենից շատ ուշքի է ընկնում մեր ժամանակներում, որ ունենալու է հասարակական գործիչը, կամ նա, որ նկրտում է հասարակական գործիչի թիկնաձուութիւն ձեռք բերել։ Պէտք է նա վայելէ հասարակական հաւատարմութիւնը։ Առանց դորան անկարելի է իսկական հասարակական գործիչ լինել. և, որ գլխաւորն է, միշտ պիտի ի նկատի ունենայ, որ երբ նա կորցրեց այդ հաւատարմութիւնը, ասել է վերջացաւ նորա հասարակական գործը։

Ի՞նչպէս պէտք է ձեռք բերել ընդհանուրի հաւատարմութիւնը, կը հարցնեն մեզ, քանի որ հասարակութիւնը բաժանուած է միմեանց հակառակ կուսակցութիւններ։ Մէկի հաւատքը վատահես, պիտի միւսինը ձեռքիդ բաց թողնես։

Ո՛չ այդպէս չէ։ Հասարակութիւնը միաձայն կը հաւատայ մի հասարակական գործիչի, կամ նորան՝ որ նկրտում է իրեն թիկնաձու կարծել հասարակական պաշտօնավարութեան, եթէ տեսնում է նորա մէջ անկեղծութիւն, հաւատարմութիւն և անսահման սէր դէպի հասարակական գործը և շնորք հասարակական գործը վարելու համար։ Հասարակութիւնը միշտ յարգում է անկեղծ և շնորքով հասարակական գործիչի հայեացքների տարբերութիւնը, որովհետև հայեացքների տարբերութիւնը դանազան ճանապարհներով կրկին նոյն նպատակին են հասցնում։ Միայն թէ այդ

հայեացքները յայտնողը անկեղծ և անշահախնդիր լինի:

Դժբաղդաբար՝ մեր ժամանակներում կազմւում են մի տեսակ հասարակական գործիչներ և հասարակական պաշտօնավարութեան թիկնաճուներ, որոնք շատ հեռուից ինչպէս «дѣлецъ»-ները սարքում են հասարակական, կամ աւելի ճիշտ ամբոխի quasi համակրութիւնը: Սկսում են աջ ու ձախ խնկարկել, վաճառք անել, այս կամ այն անձերի և ոյժերի հետ բաժանք անել: Do, ut des (տալիս եմ, որ տաս). ահա, այն խօսքերը, որոնցով նորանք աջ ու ձախ են դիմում. գործ են դնում քսութիւն, շողոքորթութիւն, պարսկական քաղաքականութիւն (ամբոխի աչքերից ծածկուած, յայտնի՝ բան է, որ մի մեծ դժուարութիւն չէ), և երբ կազմակերպւում է խումբը, սկսում են պոռալ, թէ մենք վաստակեցինք հասարակութեան համակրութիւնը:

Հասարակական գործի համար անհամեմատ և աւելի վնասակար է, երբ մի այդպիսի աննընդունակութիւն դուրս գայ այդպիսի սարքած ժողովրդականութիւնով և նոյն երգը երգէ:

Ծիծաղելի կլինէր, եթէ Ցինցինատը ծերակոյտի մի քանի անդամների հետ խօսք կապելով՝ վաստակէր գերիշխանի (dictator) գաւազանը: Եթէ այդպիսի քսուներ գտնուէին ծերակոյտում, որ դալին ասէին Ցինցիատին՝ do, ut des, Ցինցինատը երեսը կդարձնէր նորանցից և կշարունակէր իր արօրը: Նա կրթողնէր արօրը, երբ կայանար ժողովի անկախ, և ոչ՝ մի քանի շահագէտ սենատորների սարքած վճիռը: Ինքը Ցինցինատը, իբրև ձայն ունեցող հասարակ քաղաքացի, կրհալածէր քսուներին և կը պաշտպանէր մաքրութեան բոկզրունքը, որ ամեն ազնիւ կուսակցականների ձգտման համապատասխան է: Երբ հասարակական անկախ ձայնը նորան պաշտօնի կանչեց, և նա գործի գլուխ անցաւ, այն ժամանակ ամենքը գիտեն, որ կեղտը, անազնուութիւնը, շահասիրութիւնը, փառամոլութիւնը հալածուած կրլինին և հալածողի ձեռքերը բաց են և ոչ կապուած: Նորա ձեռքերը բաց են հասարակութեան անսահման համակրութեամբ:

Յանկալի ժամանակ է, որ մեր հասարակական պաշտօններում էս երևան գան ցինցինատներ և աւելի յանկալի, որ à la Բուլանժէ բազդախնդիրները մեզ ցինցինատներ չդառնան:

N. N.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ներսիսեան Հոգևոր Դպրանոցի հոգաբարձութիւնն այս տարի որոշել է Դպրանոցի որդեզիրներին (գիշերօթիկ սաներին) ուղարկել Սանահին, որպէսզի նոքա այնտեղից պտտեն և դիտեն ամբողջ Լօռու եկեղեցական — պատմական յիշատակարանները: Ներսիսեան Դպրանոցի սաների այս առաջին ուղևորութիւնը տեղի պէտք է ունենայ նախապէս պատրաստուած ծրագրով: Հոգաբարձութիւնն այդ ծրագրի իրագործելը յանձնել է նոյն Դպրանոցի ուսուցիչ մանկավարժ Իս. Յարութիւնեանին, որ իւր ուսանողութեան ժամանակ Եւրոպայում քանիցս մասնակցել է յայտնի մանկավարժ պրօֆ. Ռայն և պրօֆ. Ռայնի կազմակերպած դպրոցական ճանապարհորդութիւններին:

Թէև Ներսիսեան Դպրանոցը ցայժմ էլ յաճախ մեղանչում է ամենատարրական մանկավարժական սկզբունքների դէմ, սակայն չի կարելի ուրանալ, որ Հայկական մանկավարժութեան յեղափոխութիւնը — շնորհիւ Զանշեանի, Սեդ. Ռանդինեանի, Ռաֆ. Խահաթրեանի, Սահակ քահ. Սահակեանի etc — սկսուել և տեղի է ունեցել միշտ Ներսիսեան Դպրանոցում և այնուհետև տարածուել: Այժմ էս նոյն Դպրոցն է սկսում ---ջ անդամ դործադրել դպրոցական ճանապարհորդութիւնը, որ վաղուց արդէն Եւրոպայում ճանաչուել է իբրև դաստիարակիչ կարևոր միջոցներից մէկը:

Արդէն անցեալ տարի «Արձագանքի»ի էջերում տպագրուեցան մեր աշխատակից պ. Լօրդի մանրամասն յօդուածները դպրոցական ճանապարհորդութեան և տեսութեան վորձի մասին:

***

«Italie» լրագիրը հաղորդում է, որ նորերս լոյս է տեսել Լօնդօնում մի գիրք, որ պարունակում է իր մէջ «Հայր մեր»-ը երեք հարիւր այլ և այլ լեզուներով: Այս գիրքը, որ չափազանց գերազաս կարող է համարուել յիսուն տարի առաջ վիէննայի արքունական տպարանում նոյն ազօթքի 200 լեզուով տպուած գրքից՝ վերոյիշեալ լրագրի ասելով, տպագրական արհեստի մի զեղահրաշ գործ պիտի համարել:

*
* *

Սրտաստահմանի լրագիրներում կարդում ենք, որ Սուրիա երկրի Համա քաղաքի (Թիւրքիա) ռուսական փոխ-հիւպատոս Կոստանդին Կամսարականը մխեհնոյն պաշտօնով փոխադրվում է Դամասկոս:

***

Վիկտոր Հիւգոյի կտակակատարները պարտնայք Օգիւստ Վակերի և Պօլ Մէօուիս, որոնց՝ ի թիւս այլ և այլ պարտաւորութեանց, յանձնուած է նոյնպէս հուչակաւոր հեղինակի անտիպ մնացած երկերի հրատարակելը, նորերս լոյս են հանել հանդուցեալ մեծանուն բանաստեղծի մի նոր քերթուած «Ոտուած» վերնագրով, բազկացած մօտ հինգ հազար տող ոտանաւոր զրուածից: Այդ քերթուածի մէջ հանրահռչակ բանաստեղծը քննելով աշխարհիս բոլոր կրօնների և ամեն ժամանակի հասկացողութիւնները Արարչի գոյութեան վրայ, եզրակացնում է թէ կայ Ոտուած ամենակարող սիրեելքի և բոլոր բնութեան օրինաց սահմանիչ: Ըր նայելով որ այս քերթուածը լի է խրթին բնազանցութիւններով՝ բաւականին մեծ թուով սկսուել է արդէն տարածուել: Ուշադրաւ նկատելի է, որ մանաւանդ վերջին ժամանակներս Ֆրանսիացի այս անմահ հեղինակի երկասիրութիւնները ամեն տարի նոր նոր հրատարակութեամբ լոյս տեսնելով մեծ քանակութեամբ վաճառւում են:

***

Թուսայ տէրութիւնը, իբրև ժամանակաւոր օրէնք, վճռել է հետևեալ կարգը մտցնել ուղղափառ և կաթոլիկ դաւանութիւններին պատկանող անձանց մէջ կայացած ամուսնութիւնների վերաբերմամբ: Հռովմէական-կաթոլիկ դաւանութեան մի անձի ուղղափառ դաւանութեան պատկանող անձի հետ պսակը կարող է կատարվել ուղղակի եկեղեցում, բայց այս դէպքե-

լում պահանջվում է, որ ուղղափառների հետ ամուսնութեան մտնող կաթոլիկ դաւանութեան անձինք ուղղափառ եկեղեցու (ուր պսակն է լինում) հոգևոր խմբին հոգևմէական - կաթոլիկ ծխական քահանայի վկայականի փոխարէն ներկայացնեն տեղական ոստիկանութեան կողմից վկայական, թէ իրանք դեռ ամուսնացած չեն և ընդունակ են ամուսնութեան: Այս տեսակ վկայականները տալիս տեղական ոստիկանութեան պաշտօնեանները ի նկատի պէտք է ունենան յիշեալ անձանց մետրիկները, դիմադիրները և ուրիշ վկայաթերթերը, իսկ եթէ այդ անձինք չը կարողացան ներկայացնել ոստիկանութիւնը, պէտք է բաւականանայ երկուսից ոչ պակաս հաւատարիմ վկաների ցուցմունքով:

***

Ռուսաց «Ցերկօվնիա վեդօմօսթի» լրագրում կարդում ենք հետևեալը. «Ուղղափառ քրիստոնէութիւնը Կովկասում տարածող Ընկերութիւնը, որ ահա 31 տարի է գոյութիւն ունի, ներկայումս պահում է 196 եկեղեցի, 147 եկեղեցական խմբեր, 36 ուսումնարան (որոնցից երկուսը միջնակարգ դպրոցի դասընթացքով են) 92 որդեգիրներ և որդեգրուհիներ դանազան ուսումնարաններում և գիմնազիոններում, մի քանի քարոզիչներ որոշ ռոճիկով: Եկեղեցական խմբերի վրայ ծախսվում է տարեկան 62,524 ռուբլի, դպրոցների վրայ 30,000 ռ. աւելի, հին պատմական տաճարների, վանքերի և մայր եկեղեցիների վերանորոգման համար 10,000 ռ. բացի այն նշանաւոր ծախքերից, որ ամեն տարի լինում են ընկերութեան եկեղեցիների համար զանազան զարդեր և իրեղէններ, մոմ և խունդ դնելու, նոյնպէս և չքաւոր այրիներին, հոգևոր դպրանոցների և ուսումնարանների աշակերտներին նպաստելու, օսերի լեզուով հոգևոր գրքեր տպելու և այլ հրատարակութիւնների համար: Վրաստանի էքզարխ սրբազան Պալլադիի առաջարկութեամբ ընկերութիւնը որոշել է հիմնել մի քանի շարժական քարոզչական խմբեր, որոնք տեղից տեղ փոխուելով, պէտք է ժամանակ առ ժամանակ դան էքզարխութեան և առ հասարակ Կովկասի այն տեղերում, որ անհրաժեշտ է Աստուծու խօսքի բերանացի քարոզներով և իւրատներով տարածել ռուսաց լեզուն և դրութիւնը, նոյնպէս և օտարացեղ և օտարակրօն ազգութիւնների մէջ մտցնել օրինական կարգեր և քաղաքացիութիւն, կրթելով նրանց ազգասիրական ղգայմունքով և ներշնչելով սէր և անձնուիրութիւն դէպի Միապետը, Նրա Գահը ու ընդհանուր Հայրենիքը: Առաջին անգամ, փորձի համար, կը կազմուեն երկու քարոզչական խմբեր. մէկը մահմեդականացած վրացիների մէջ քարոզչութիւն անելու և առ հասարակ զանազան կրօնների և դաւանութիւնների պատկանող օտարահաւատներին դարձնելու համար, իսկ երկրորդը աղանդաւորների մէջ քարոզչութիւն անելու համար: Իւրաքանչիւր տեսակ մի խումբ բաղկացած պէտք է լինի մի քահանայից կամ արեղայից, սարկաւագից և երեք լաւ երգեցող և պաշտօնէութեան ժամանակ լաւ կարդացող երգիչներից: Այս անձանց պարտքը կը լինի, ի միջի այլոց, և եկեղեցական — ծխական ուսումնարաններ կազմակերպել, նոյնպէս և վերջինների վրայ ղգուշօրէն հսկողութիւն ունենալը: Բացի դրանցից, օտարահաւատներին և աղանդաւորներին սուրբ հաւատի և բարոյականութեան հոգով կրթելու համար ձեռք կը բերուին հասարակ ժողովրդական լեզուով մխսիոներական գրքեր և թերթեր հոգևոր-բարոյական բովանդակութեամբ և կը բաժանուին ժողովրդի ընթերցանութեան համար»:

***

Մեր վաղամեռ նշանաւոր տաղանդի՝ Պետրոս Ադամեանի լեզ յուղարկաւորութեան և թէ թաղման նկարագրութիւնների մասին բազմաթիւ յօդուածներ և շատ դամբանականներ ընդարձակ էջեր բռնած ունին մանաւանդ Կ. Պօլսի «Արեւելքի» մէջ, որից արտատպում ենք ի տարբեր յիշեալ լրագրի աշխատակից պ. Սրշակ Յովսեփեանի տարաբախտ հանգուցեալին նուիրուած գեղեցիկ յօդուածի այն սիրուն կտորը, ուր յօդուածագիրը՝ «վերջին ներկայացումն» է անուանում դժբախտ Ադամեանի մահը և թաղումը: Ահաւասիկ այդ կտորը՝

—Ամեն անգամ որ մեծ ողբերգուին ներկայացումներուն մէկէն կը դառնայինք, սրտերնիս ելեկտրական յուզմամբ մը բաբախուն, կ'ըսէինք իրարու. «Ծայրէ ծայր հիանալի էր իր դերին մէջ բայց այն մահուան տեսարանը, հոն էր որ Ղամեան իր արուեստին գենիքը բարձրացաւ:» Եւ այսօր որ կը դառնամ ահռելի ներկայացումէ մը, Ալէքսիրի անմահ թարգմանին թաղման հանդիսէն, այդ կեղծ մահերուն չիշատակն ահա կուգայ հալածել վրս: Կը տեսնեմ գայն Օքէնէյէ Ե. արարուածին մէջ, երբ յանկարծ սպանեալ Տէզտէմոնային վրայ ողբալէ յետոյ դաշոյնը վիզին կը դնէր և կ'իյնար՝ անշնչացեալ՝ իր մարդոցը դիրկը. կը տեսնեմ մանաւանդ Ռէյոռէ վերջին արարն, այն բըստմընելի վերջին արարն, ուր կնոջմէն ու միամօր դստրիկէն լքեալ հայրն սթրիքնինին կը դիմէր ազատելու համար իր հոգեկան ցաւերէն. ՕՀ, չարատանջ այն դարարումներն, որոնցմով իր մարմինը կը պրկուէր, կը կծկուէր, և այն ըսանգանքներն, որք կը ցնցէին իր անդամներն և իր ակռաները կափկափել կուտային, բոլոր այն ողևարի ցնորական մոլորուն շարժումներն, ինչպիսի ցուրտ մը կը հոսեցնէին մեր սրտին մէջ, և ինչ սարսուռ մեր ոսկերց մէջ կը սահեցնէին, — ցուրտը գերեզմանին ու մահուան սարսուռը: Բայց ահա յուզումէն ակարացած ձեռքերը ծափեր կը տեղային, վերաբացուած վարագոյրին ետև կը տեսնէինք Ադամեանն, որ յոտին կանգնած, այդ վայկենական մահէն ժժգունած դէմքը ժպտով մը կենդանացուցած, մատներուն ծայրովն համբոյրներ կը բաշխէր հիացողաց ամբոխին:

Ողբերգութիւնն որ այսոր կատարուեցաւ և որուն ներկայ էր այնչափ խուռն բազմութիւն մը, որչափ երբէք չէին վայելած մեծ արուեստագէտին տուած ներկայացումնք, այդ ողբերգութիւնն որ աւելի վսեմ էր քան Լիր թագաւորին անէծքն, աւելի տխուր քան Տէզտէմոնայի ուռենուոյն երգն, աւելի խոր քան Համլէթի մենախօսութիւնն, այդ ողբերգութիւնն իրեն ոչ դերակատար այլ նիւթ ունէր Ադամեանն, իրեն կրկնակ թատերաբեմ՝ եկեղեցի մը և գերեզմաննոց մը, և դերասան՝ այն «մահերգակ մարդիկն, որք սև ունին ու խոժոռ դէմ»: Եւ հեղինակն, այն թաղձապին բանաստեղծն ոյր ոսկրեղէն գրչէն արհաւիրք ու աղջամուղջ կը կաթեն, Մ'ահն էր հեղինակը...:

Լոյսերու և պսակներու ճոխ փթթման մը մէջ, ապիտակ ուրուանման մոռերով շրջապատուած որք կը հակեն իրենց ծխաշունչ բոցեղէն գարգմանակն, թաւշապատ արձաթազարդ փոքրիկ ու նուրբ դագաղի մը կափարչին տակ, —Ինչպէս նուրբ, Աստուած իմ, և ինչպէս փոքր, ծաղկատի աղջկան դագաղ: —Ադամեանը, [illegible], կը հանգչէր, որպէս իր խաղերէն մինչն

վերջը. և փակուած վարագոյրի մը տեղ պատանքն էր որ կը ծածկէր գայն, մեր աչքէն. Ու միշտ մահուան սև սև երգերը խունկի գորշ գորշ գալարներուն հետ կը բարձրանային, մինչ կարմրած աչքերէ արցունքներ կը գլորէին ու պզտիկ խղդուած հառաչներ սրտերու թախիծը կր մատնէին, իսկ երազով մը համակուած, ակնկառոյց կր սպասէի այն վայրկեանին, ուր կափարիչը վեր նետելով սիտի դուրս հանէր կարծեցեալ մեռելն իր գեղեցիկ հերարձակ գլուխն, ու միշտ վայրկենական այդ մահէն ժժգունած դէմքը ժպտով մր կենդանացնելով, մատանց ծայրովն համբոյրներ մեզ պիտի բաշխէր. . . :

Ա՜հ, տեսանք գայն, գեղաճաճանչ ու հանճարագեղ այդ դէմքը, զոր կր յուսաւորէր այն դմբէթային ճակատն, որու վրայ գոյզ ծոպիանց սէտ կր բացուէին կապոյտ խորհուրդով երկնանուշ այն աչքերն, և որ կր շրջանակուէր առիւծի բաշի նման խրոխտ ու մետաքսի պէս փափուկ գանգրագեղ վարսերով. տեսանք այդ դէմքը, մահուան երկաթէ սիին մէջ ճգմուած, կծկուած, դեղնած մեղրամոմի գոյն առած, անկանոն ու կարծրացել մօրուքով մր կպակին ազատած, շրթունքը գոգցես չափազանական համբոյրի մր մէջ սեղմուած անշարժ, և այքերը՝ կիսաբաց՝ տարտամ նշոյլ մր արձակելով որ նայուածք էր երբեմն. . . : Եւ ահա չանկարծ այդ դէմքն ու այդ մարմինն, և այդ ուղեղն. ուր հանճարն էր բունած, և այդ հոգին որ կապոյտէ, խունկէ, մեղրէ էր կազմուած, և այն ճակատն որու վրայ խորհուրդք կր թառէին, և այն աչքերն զոր ոչ միայն իր հոգւոյն, այլ մարդկութեան հոգւոյն կիրքերն ու զգացումները կ'ապրէին, և այն շրթունքն որոնցմէ կը թափէր քաղցրահնչիւն բառերու ջրվէժն, այդ ամէնքը, լաթի կտորի մը մէջ փաթաթուած, նետեցին ծակի մը մէջ. և ահա մեծ վարագոյրը, վերջին արարին վերջին վարագոյրն իջաւ ծանալեցաւ անոր վրայ, հողին սեւ, հողին խոնաւ, հողին որդնոտ վարագոյրը: Խաղն աւարտած էր, և Մահը, լցուած փոսին վրայ կանգնած յաղթական, չոր դէմքը ծամածռութեամբ մը արհաւրացուցած, դատարկ աչքերուն խոռոչներն աւերման հեշտութեամբ լըցուցած, իր կմախային մատներուն ծայրովը մեզ համբոյրներ կր բաշխէր. . . :

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

Երկար ժամանակէ ի վեր ելեւմտական նոր ընտրութիւններ էին կատարվում թէ այստեղ և թէ գաւառներում: Այս նոր ընտրութիւններին իրաւունք տրուած էր մասնակցել նոցա, որոնք որ 72 ղուրուշ (6 ռուբլի) ազգային տուրք վճարելու կարողութիւն ունին, և այսպէս էլ եղաւ. ամեն ուրեք ըստ յանձնաժողովութեան պատրիարքարանի և վարչութեան թաղական խորհուրդները քուէ ունենալու իրաւունք նշանակում էին միմիայն 72 ղուրուշ վճարելու կարող և ոչ թէ վճարող մարդոց: Այս հիման վրայ քուէարկութեանց մասնակցեցին մի որոշ դատակարդի մարդիկ, իսկ բուն ժողովրդական զօր զուրկ մնաց մասնակցութիւնից: Քուէարկութեան այս տեսակ եղանակին սաստիկ հակառակում էր միայն ազգ. ժողովի անդամներէն Ա. Սուրենեան, որ պնդում էր թէ քուէարկութեան մասնակցելու իրաւունք պէտք է ունենայ ամբողջ ժողովուրդը և ոչ թէ առանձնաշնորհեալ մարդիկ միայն. բայց քանի որ այդ ընտրութիւնը սահմանափակվում է 72 ղուրուշ վճարելու կարող անհատների մէջ, ապա ուրեմն քուէ տալու ժամանակ դոցանից անմիջապէս պահանջելու է 72 ղուրուշ ազգային տուրքը. այդ վճարելու կարող դատակարդն ըստ մեծի մասին սահմանապրութեան սկզբէն ի վեր ազգային տուրք վճարած չէ և այժմ երբ նորան հասարակ ժողովրդից աւելի իրաւունք, է տրվում, գոնէ այդ տուրքն էլ է կանխիկ ստանալու է, եթէ ոչ ինչ է նշանակում թող տալ որ դոքա օրէնքից խնայուի օգտուեն, իսկ պարտքը ապա-գի թողեն, եթէ կանխիկ չեն վճարում, միևնոյն է վճարելու անկարողների իրաւունքը պիտի վայելեն:

Սուրէնեանի ձայնը անջրևի մնաց, սակայն Սուրէնեան որոշած էր նոյն իսկ ժողովի մէջ իւր ամբողջ ուժովն ապօրէն հնչակել տալ այդ ընտրութիւնները. բայց ժողովի կայանալէն մի երկու օր առաջ Բ. Դռնից ստիպողաբար խնդրուում է որ Սուրէնեանին արգելուի ազգ. ժողովի նստին ներկայ գտնուելու, որովհետև խռովութիւն պիտի հանէ:

Ոստիկանութեան և ապա դատական դործոց նախարարները յաջորդաբար կանչելով ազդարարում են նորան ժողովքի չերթալ: Սուրէնեան պատասխանում է թէ իրը երեսփոխան բացի օրէնքից ոչ ոք կարող է իւր ձայնը խեղդել տալ և թէ եթէ բանտարկուի, այն ժամանակ միայն պիտի չկարենայ երթալ ժողովքի: Այս լուրերի վրայ դատական դործոց նախարարը դուրս գալով իւր սենեակից դնում է Մեծ-Եպարքոսի մօտ, և անմիջապէս հաղորդում է պատրիարքարանին ժողովք չը դումարել. ուրբաթ առաւօտ կանուխ պատրիարքը դնալով Մեծ-Եպարքոսի մօտ ետ է առնում հրամանը և նոյն օրն էլ ժողովք լինելով վաւերացվում է նոր ընտրութիւնները և Պէշանի էլ ընտրութիւն կատարվելով ազգ. ժողովի ատենապետ է լինում Յովհաննէս էֆ. Նուբեան: Որպէս ազգային դործիչի՝ Նուբեան էֆէնտիի վրայ երեք տարի առաջ շատ ընդարձակ կերպիւ դրուած լինելով «Արձագանքի» մէջ առ այժմ հարկ չկայ նոր ծանօթութիւններ աւելացնել:

Սուրէնեան և ուրիշ շատ երեսփոխանները ներկայ չէին ժողովին:

ՎԱՂԻՆԱԿ

Կ. Պօլսից մեզ գրում են.

—Պառոն Մաքար, Պելժ դրամատէրների խմբակին ներկայացուցիչը, կերևի թէ պիտի չյաջողի վերջնականապէս ստանալ Սուլթանէն Սամսոն – Սեբաստիա երկաթուղու շինութեան արտօնութիւնը, Սուլթանը իր քով կանչելով Պր. Մաքարին, անձամբ իրեն խոստումներ արեր է այդ մասին: Երկաթուղւոյ գիծը Սամսոնէն սկսելով կը հանդիպի Սեբաստիա, Կեսարիա, Նիկոմէ և կը հասնի մինչև Անէքսանտրէթ (Խաքէնտէրուն), որով Սև և Միջերկրական ծովերի նաւահանգիստներն կը միանան իրար հետ: Գծին անցած երկիրները շատ բարեբեր են և առատօրէն կը հասցուներն արմտիք, ձխախոտ, սիլիոն, սուսամ և խոզկաղին:

—Հանգուցեալ Ադամեանի վեհան Քեռբոբէ Թաշճեան ի նկատ առնելով Ռուսիոյ Հայերի ցոյց տուած մեծ երախտիքն դէպի ողբացեալ Ադամեանը, խնդրում է յայտ-

նել «Արձագանքի» միջոցաւ թէ իւր և իւր կնոջ փափաքն է Ազամեանի դերասանական զգեստները նուիրել Ռուսիոյ Հայերին ի նշան այն անկեղծ սիրոյ, որ Կովկասն ու Ռուսաստանը ցոյց տուին մեծ Արտիստի նկատմամբ:

Ուստի եթէ Թիֆլիզում Հայ յարմար մի սրահ չգտանք, կը խնդրեմ Հաղորդուի այստեղ ինչպէս որ Հարկն է այդ զգեստների տեղափոխման համար: Թաշճեան այնպէս է կարդացրել որ Ազամեանի բոլոր թուղթերն ու յիշատակները անկորուստ մնան:

ՏԱՃԿԱԿԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՏՐԱՊԻԶՈՆ

Պոնտոս կամ Տրապիզոն Սև ծովու Ասիական եզերաց վրայ դէպի Արևմտեան Հիւսիս առաջնակարգ բանուկ և վաճառաշահ նաւահանգիստ և բարգաւաճ քաղաք մ'էր յանցելումն, և այսպէս էր տակաւին սակէ 25/30 տարի յառաջ: Ի հնումն Արևելեան Ասիոյ ժողովրդոց համար Պոնտոս Տիրոսի չափ մեծ նշանակութիւն և կարևորութիւն ունէր. սորա պատմական անցեալն յոյժ սիրալի և շահեկան կողմեր և նկարագիր ունի. մանաւանդ դի, ըստ Հարազատ պատմագրաց վկայութեան, ծավածիծաղն Պոնտոս Թ. դարէն սկսեալ մեր բարեյիշատակ նախնեաց, առևտրական գործով յՈղեքսանդրիա, ի Տիւրոս, յԵգիպտոս և յայլ շահաստան քաղաքս երթևեկութեան մշակ նաւահանգիստն էր:

Տրապիզոնի ներկայ աղգաբնակութիւնք կը կազմեն, Թուրք 4000 տուն, Հայք 600--1000 տուն, Յոյնք 1500, Կաթոլիկք և Բողոքական Հայք 150, 200 տուն, և ս Պարսիկ և Վրացի կամ Մինգրէլք և այլն: Տրապիզոնի նահանգը պզտիկ և սահմանափակ ըլլալուն՝ սակաւ դիւղեր ունի, որոց բնակիչք ազքատ վիճակ մը ունին ընդհանրապէս և յորս Հարուստներն խիստ քիչ են և բացառութիւն կը կազմեն: Մանաւանդ այս կողմերու դիւղաքաղաքակ ազգայինք խեղճ ու կրակ ապրուստ և կեցութիւն մը ունին: Պօլսոյ փափկութեան և գրգանաց մէջ ապրող Հայ տիկնայք, եթէ այս կողմերու իրենց Համագդի քերդ կենցաղն և վիճակը տեսնեն, խիստ շատոնց պիտի դադարին իրենց արանց դէմ անտեղի գանգատ և դժգոհութիւն ցուցնելը, և պիտի ստանան ինքնին սրտի կատարեալ գոհութիւն և մտաց անդորրութիւն: Ուրեմն, տիկնայք վսփկասունք Հայոց Կ. Պոլսոյ, մող Հայ մը ուտեն, Հայ մ'ալ ողորմութիւն տան աղքատաց, քանդի Տրապիզոնի գիւղերը կան և ես կրնամ յիշել ու թուել շատ մը Հայ ընտանիքներ, որք օրն ի բուն քրտնաթոր և չարքաշ կ'աշխատին, կխտամերկ, բոպիկ և ցնցոտիներ հագած. եթէ յաջողին դէթ եղիպտացորենի չորաբեկ հացը ճարել և այնու զատակաց արտասուքն սրբել, իրենց համար մեծ բաղդաւորութիւն ու մխիթարութիւն կը նկատեն:

Տրապիզոնի ներքին առևտուրն ինկած է այժմս, և հետզհետէ կ'ինչնայ, մանաւանդ յօրէ յայնմանէ, երբ Սամսոն սկսաւ հետզհետէ իր մրցումներն ստուարացնել մեր դէմ, իր ներքին բերքերն մեզմէ կանուխ և յառաջ Եւրոպիոյ հրապարակները քշել, յառաջդիմել և զարգանալ նիւթական և տնտեսական տեսակէտով: Տրապիզոնի և Սամսոնի վրայ գործ և առևտուր ընող վարձառու մարդիկ լաւ գիտեն որ այլ ևս այս երկու նաւահանգիստ քաղաքներ իրարու բաղդատել, մանաւանդ առևտրական հայեացքով ուղիղ բանի համարակ է և եթէ Սամսոն - Սերբաստիոյ երկաթուղիք շինուին՝ այստեղի, վարձ, դրական կամ գործնական մարդոց կարծիքն այն է թէ յայնժամ Տրապիզոնի տնտեսական վիճակն աւելի պիտի տկարանայ:

Տրապիզոնի օդն կամ կլիմայն գարունը և ամառը վատառողջ և հեղձուցիչ ըլլալու աստիճան տաք կ'ընէ, իսկ ձմեռնառութիւնն մշտատև է, և ծիւրական բնութիւն մը ունի. պատահած են տարիներ յորս տևղող ջերմութիւնը մինչև 36/38 աստիճան հասած է: Քաղաքին առողջապահութեան սպառնող այս պժնդակ ջերմութիւնն իր հետ յաճախ շղթայեալ կը բերէ տենդ, թոքատապ, ժանտատենդ և ուրիշ մահացու հատանգութիւնք. ուստի գարնան մայիս 8/10-էն սկսեալ տեղացի ժողովուրդը, մանաւանդ քրիստոնեայ տարերք մեծագոյն մասամբ շրջակայ օդաստուն, հովաստուն, դալարաւէտ, ջրաւէտ, ծառախիտ, մարդաստան և մրգաստան գիւղերն օդափոխութեան կ'երթան, ուր կը մնան մինչև աշնան՝ սեպտեմբերի վերջերն. այս գիւղերէն Քալակասպի և Զէֆանօղ իրենց պատուական կլիմայով, առատջուրաբոյ օդով և պաղորակ ու բարեհամ ջրով Տրապիզոնցւոց գլխաւոր ամարանոցներն են:

Տրապիզոնի ներքին բերքերն են՝ կաղին, լուբիա, ծխախոտ, ձիթապտուղ, ձիթախիւղ, քթան և մրգեղէն. ներքին բերքերու (կաղին, լուբիա և ծխախոտ) առևտուրը գլխաւորապէս Հայերու ձեռքն է. առանց վարանման կը գրեմ, և գրելովս կը մխիթարուիմ տալիք տեղեկութեամբքս, ըստ որում կան հոս Հաստատամիտ, երկաթեայ կամքի տէր ձեռներէց և ձեռնհաս քանի մը պատուական Հայեր, որք լնքնօգնութեամբ ժրաջան աշխատութեամբ և անվհատ յարատևութեամբ մեծ վարկ և համարում վաստկած են Եւրոպիոյ կարևոր վաճառատանց մօտ, և ակնածելի վիճակ բարձր դիրք մը ունին, ատ հասարակաց կարծեաց առջև:

Տրապիզոնի թուրք ազգաբնակութիւնն վաճառականութեան մէջ շատ ու շատ յառաջ պացած է: Հոս պղնձի, երկաթի, պողպատի, անագի, շաքարի, խահուէի և այլ այս կարգի կշռելի վաճառայ առևտուրն մեծագոյն մասամբ կրնամք ըսել ամբողջովին տեղացի թրքաց ձեռքն անցած են շատ կանուխ և շատ տարիներէ հետէ. ատ թրքաց մէջ Հարիւրներով կը համրուին կալուածատէր, դրամատէր, մեծատուն և մեծ վաճառական անձինք, որք շատ անգամ իրենց վաճառում և դնումները մեծ քանակութեամբ ուղղակի Եւրոպիոյ հետ կ'ընեն:

Տրապիզոնի մէջ գործածուած արհեստներն են. ոսկերչութիւն, դերձակութիւն, կօշկակարութիւն, խոհարարութիւն, ոստայնանկութիւն և եաղմաճութիւն, ատոնց մէջ ևս մեր ազգայինք մեծամասնութիւն կը կազմեն. ոստայնանկութիւն և եաղմաճութիւն ամբողջովին Հայոց ձեռքն է. հոս ոստայնանկութիւնը բաւական մշակած և յառաջ տարած են. 300/400 Հայ ընտանիք այս արհեստագործութեամբ կ'աշխատին և իրենց ապրուստը կը ճարեն, կը գործեն անձեռոց, բազանեաց ղենջակ,

ՓԱՆԴԱՈՍ ՋՐՄՆԴԱՑԻ ԱՐՈՒԵՍՏԳԼՈՒՆ—ՆԿԱՐԻՉՆԵՐԻ

(Պատկեր Ժ. Էննեբի)

ՅԵՒՐԹԱՀԱՐՈՒԹԻՒՆ ՎԻԹՏՐ

թականներին ճանապարհորդական դիւրութիւններ տալով, ադոնք ալ չկրցան վերարձի երես, անկողնոյ ծածկոց, մանաւանդ դիմացկուն և ընտիր տեսակէն մեծ քանակութեամբ մանուսայ և այլն, որոնք Պուրսայի, Երզնկայի և ուրիշ քաղաքաց բամպակեղէն ձեռակերտաց հետ յաջողապէս կրնան մրցիլ, և տեղացւոց բազմաց ապրուստի միջոց մ'են:

Հոս տեղն ու կարգն եկաւ զովութեամբ յիշել այն գործօն մասնակցութիւնը, զոր ունի և կ'ստանձնէ Տրապիզոնի Հայ կինը յօժար կամօք օգնելով իւր սիրելի ամուսնոյն գործոյն և աշխատանաց: Հոս Հայ իգական սեռն առանց բացառութեան օրն ի բուն կ'աշխատի, կը հոգայ տնական անհրաժեշտ պէտքերն, կ'ելէկ, կը պատրաստէ կերակուրն, կը կարէ կը լուայ իւրայնոց ճերմակեղէնն և լաթերն, մինս հիւսէ քթան կը մանէ, կանացի մետաքսեայ ծածկոց (չարշաֆ), նաև մաղուսայ կը գործէ, և այս կերպիւ առնուազն իւրաքանչիւր կին կամ օրիորդ 5/6 ղրուշի աւուրչէք կը շահի. ես լաւ գիտեմ և կրնամ յիշել ու թուել բազմաթիւ Հայ ընտանիքներ ի Տրապիզոն, որք իրենց և զաւակաց ապրուստն ձեռակերտիւ և աշխատութեամբ հոգալէ զատ, առանց ծխախոտի, օղիի և դինիի ղրամն ալ յականայիցս իրենք կը վճարեն, և այս լինչ մեծ ամօթ առնական արժանապատուութեան դէմ:

Տրապիզոնի Հայ կինը երբ այսպէս կը աշխատի օրն ի բուն, խիստ բնական է հետևցնել թէ ամբիծ կը պահէ իւր վեսային առազաստն, պարկեշտ և ողջախոհ կ'ապրի ընտանի յարկին մէջ, միանգամայն աշխատութեան բերմամբ կը մնայ և կը լինի յուէտ երկիւղած, բարեկրօն և առաքինի, ըստ որում գործ և աշխատութիւն առաքինութեան երկրի արժուն պահապաններն են:

ՉԱՐԿԱՆԳ,

Ձմշկածագ գաւառակի Իչ Պէյ ղիւղն ունի հարիւր չիսուն տան չափ բնակիչ, բոլորովին Հայաբնակ և քաղաքին ամենէն մօտն է: Բնակչաց մի փոքր մասն երկար տարիներէ ի վեր յարեալ է բազմքակատութեան, ունին ժողովարան մը, որ կը գործածուի նաև իբր վարժարան: Մնացեալ մեծագոյն մասը լուսաւորչական է, ունի եկեղեցի մը՝ դիւղէն դուրս կառուցուած, վարժարան մը և Ս. Սարգիս անուն ուխտատեղի մը, որ դիւղին մօտ ահագին ժայռ մըն է: Իչ Պէյլի մէջ չորս տարիէ ի վեր անհամաձայնութիւնք ծագած են, որք կը հասնին այժմ իրենց դադաթնակէտը: Ժողովուրդը երկու և երբեմն երեք կուսակցութեան բաժնուած անգամ մը գաստառի ընտրութեան մէջ իւրաքանչիւրն իր կամքն ու ընտրելին կուզէ յառաջ մղել, անգամ մը եկեղեցւոյ խընդրոյ մը մասին, ուրիշ անգամ մը չեմ դիտեր ո'ր կէտին: Տարի մը կար որ դպրոցի խնդիրը բաւական կարգադրուած էր, չէ թէ երկոտասեր Համաձայնութեամբ՝ այլ անձիւր կուսակցութիւն վարժարանն երկու մասի բաժնած, իւր յատուկ դաստառն ունենալով՝ որուն յանձնած էր իր և իւր թիկնաձուաց մանկտին: Այժմ այս մասին ևս նոյնոր անհամաձայնութիւններ պատահեցան: Իրաց այս վիճակին մէջ դիւղին քահանայն կ'ըստիպուի հրաժարիլ. այժմ, եկեղեցին գրեթէ փակ կը մնայ այս պատճառաւ...:

(ԱՐԵՒԵԼՔ)

Արտասահմանեան մի Հայ լրագրի մէջ կարդում ենք հետևեալը.—

—Մէկ երկու շաբաթէ ի վեր խարբերդէն և շրջակայ գաւառներէն 40-ի չափ Հայեր Մարսէյլ լեցուած են Ամերիկա երթալու համար: Ադոնցմէ քիչերը իրենց ճամբան շարունակելու համար դրամ ունին. ամենամեծ մասը երկրէն վեր առած 20 կամ 30 լիրան մինչև այստեղ հասնելը հատուցեր է Պէլոմթի, Իսքէնտէրունի, Իզմիրի, Սամսոնի նաւահանգիստներին մէջ եղող թիւրք ոստիկաններին պարգև տալով, որպէսզի ադոնք արգելք չըլլային իրենց երազած Ամետեաց երկրին ճամբան շարունակելու:

Ֆրանսական ոստիկանութիւնը վերջերս նկատելով որ Սիւրիացի, Հրէայ և Արաբ միջնորդները սկսած են ի չար գործածել դաղթականներուն միամտութիւնը և անոնցմէ իրենց չանձնուած նաւողէքի դրամ և այլն խիզճ չեն ըներ երբեմն գրպանել և աներևութեանալ, այդ բանի համար շաբթուս ընդհանուր արգելք հանեց բոլոր միջնորդներուն համար ալ, որով մի քանի Հայեր, որոնք աստ կրզբաղէին Հայ դաղղերս Հասած յիշեալ 40-ի չափ Հայերին դիւրութիւններ տալ իրենց ճամբան շարունակելու:

Անցեալ կիրակի օր, այդ գաղթականները խեղճ ու կրակ մնացած, և ինչպէս վերն րսուեցաւ, ամենամեծ մասը անգրամ, Հայ մատուռը խռնուեցան և մի ճար գրտնելու համար դիմեցին դաղթականութեանը Գեր. Չովուին:

Թերևս ի վերջոյ Հնար մը գտնուի դէթ այս 40 անձ ճանապարհ դնել: Ադոնք ալ այն բազմաթիւ խարբերդցիներէն են, որոնք ոչ այնքան ապրուստի մը պակասութենէն, որքան մի քանիներուն Ամերիկայի մէջ գտած բազդէն շահասիրութիւնին զրդռուած, իրենց համեստ գործեր ձգելով տաժանելի պանդխտութեան մը կը դիմեն: Իւրաքանչիւր շաբաթ իրարի վրայ 15 Հայ կը մեկնին միայն Մարսէյլէն, իսկ վերադարձողների գրեթէ շատ քիչ կը Հանդիպինք: Այնտեղ Հասնողներէ մեծ մասը շուտով կը տեսնէ իր յուսափ լինելը, սակայն դառնալը այնչափ Հեշտ չէ. ահագին ճամբայ մը, և ճամբու մեծագումար ծախքի մը պէտքը մէկ կողմէն զինք կը վհատեցունեն, միւս կողմէն ալ այս պարագան կայ որ Հայրենիքին մէջ ունեցածրն ալ զրաւի դրած է մեկնած միջոցին, այնպէս որ այժմ վերադարձին աւելի թշուառ պիտի լինի և ծիծաղի ալ առարկայ. ուստի կը մնայ իրեն՝ յուսահատութեամբ ամերիկեան գործարանական յորձանքին մէջ ձգել ինքզինք. ալ ներկայէ իր անձնական ապրուստին վրայ միայն մտածել, առողջութիւնը Հաշուի չդնելով:

ԱՐԻՒՆԱՀԵՂ ԿԻՒԻ ԵՐՈՒՍԱղԷՄԻ ՄԷՋ

—

Կ. Պոլսէն կը հեռագրեն յունիս 5-ի թուով:

Մին այն պարբերական կռիւներէ, որոնք պատահած են միշտ Յոյների և Լատիններու մէջ, Ս. Տեղեաց սեփականութեան խնդիրներուն համար, այս օրեր տեղի ունեցաւ:

Այս անգամի կռիւն մի թիւրիմացութենէ առաջ եկած է. պատի մը նորոգութեան խնդիրը կար և երկու կողմերէն ոչ մին յանձն կառնէր այդ գործ կատարել, փոխադարձ թշնամական խօսքերին յաջոր-

դեց կռիւ մը, այնպէս որ թիւրք զօրքերը ծկան միջամտել և այնպիսի եռանդով մը զօրծեցին, որ քանի մը վայրկեանէն ետք Ս. Տեղւոյն վրայ գլխակներ և վիրաւորներ սկսուեցան։

Կ. Պօլսի Ֆրանսական դեսպանատունը, որի պաշտպանութեան ներքեւն է Ա-րևելքի մէջ կաթոլիկ եկեղեցին, իսկ ծանուցագիր մը յղած է Ռ. Պրան այս խնդրի մասին, իբր թէ թիւրք գինուորները մասնաւորապէս կաթոլիկ կուսոդները զարնելէն հաճոյք զգացեր են, մինչդեռ նոցա հակառակորդ Յոյները ոչ մէկ կերպիւ նեղուած են։

Իրաւախոհութեան եղանակը, որ անցեալի բազմաթիւ կռիւներէն ետք մեծ դժուարութիւնով կարելի եղած էր վերջապէս կայացունել, այժմ բռնաբարուած կը նկատուի թիւրք գինուորների անպատեհ միջամտութիւնովն և Դուռը պատահածին համար պատասխանատու է։

Կը մնայ գիտնալ թէ ռուս դեսպանատունն ալ գործի մէջ պիտի մտնէ՞ ի պաշտպանութիւն Յոյներին։

Փարիզէն եկած մի հեռագիր ալ կիմացնէ որ Ֆրանսիական դեսպան Մոնթէպելլօ կոմսը արտաքին գործերի նախարարութենէն ընդունած հրահանգին համեմատ Սուլթանէն մասնաւոր ունկնդրութիւն մը խնդրած է, որի ժամանակ Ֆրանսայի պահանջումները բացատրած է խնդրի մասին։

Սուլթանը դեսպանի հաղորդածներին հիմնաւոր լինելը ճանչնալով, հեռագրել տուած է Երուսաղէմի կառավարչին, որ անմիջական զոհացում տրուի Ֆրանսական ներկայացուցչին։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ՍՈՒԼՏՈՒԶԻ ԴԻՒՐԻՐ

Սուլտուզը Պաւրիժու Հարաւային արևմտեան կողմը ընկած մի գաւառ է, որ բաղկանում է 110 գիւղերից։ Նա շրջապատուած է երկարաձիգ և շղթայակապ լեռներով, որոց մի մասը ասվում են Քրդաստանի լեռներ և որոց գագաթների վերայից ձիւնը երբէք պակաս չլինիր։ Սուլտուզի դիրքը քիչ ցածր և հարթ է և ունի շատ ընդարձակ և դեղեցիկ մարգագետիններ, հովիտներ, արօտատեղեր, կանաչ դաշտեր և այլ բնական դեղեցկութիւններ։ Ունի Կատար անունով մէկ գետ, որ իւր ակն առնում է Քրդաստանի սարերից և վայր գալով՝ ոռոգում է ողջ գաւառս ու յետոյ թափվում Ուրմիոյ լիճը։ Այդ գետը թէ իւր ջրոյ առատութեամբ և թէ ձկներով շատ օգուտ է տալիս Սուլտուզին։

Գաւառիս ջուրը շատ հաճելի է. բայց օդը խոնաւ, վատառողջ և կլիման ձմեռը շատ ցուրտ, իսկ ամառը տաք է։ Սուլտուզի մէջ կան երկու հանքային աղբիւրներ, որոնցից մէկը գտնվում է Պալիմ-Ղալայ գիւղից ոչ հեռու, Սաւուղբլաղի ճանապարհի վերայ։ Նա ծծմբի հանքիցն է դուրս գալիս և ջուրը իր բղխած տեղից քիչ հեռանալով՝ սառչում և քարանում է։ Նրա ջուրը շատ օգտակար է այն մարդկանց, որոնց մարմնի վերայ ուռուցքներ (գաշխնմայ) են լինում, և դրա համար տարին հազարաւոր մարդիկ կը գնան նրա ջրովը լողանալու և իրանց մարմնի առողջութիւնը գտնելու։

Հանքային միւս աղբիւրը գտնվում է Ղալաթ—մարան (օձի բերդ) սարի քամակովը, որին թրքերէն Ելբուլաղի են ասում (քամու աղբիւր)։ Լաւ յայտնի չէ թէ նա ինչ հանքից է դուրս գալիս, բայց նրա ջրոյ մէջ լողանում են այն մարդիկը, որ անդամալոյծ են և կամ քամիով են բռնուած։

Սուլտուզում կան մի քանի հին բերդերի տեղեր, որ տարբեր ժամանակներից են մնացել։ Նրանցից մէկը, որ Ղալաթ—մարն է, շինուել է մի առանձնացած սարի գագաթան վերայ։ Նրա երեք կողմերի պարիսպները տաշուած ապառաժներ են և վերան բարձրանալու համար միայն մէկ կողմից ճանապարհ կայ։ Նրա մասին այսպէս են պատմում թէ՝ «Հին ժամանակներում այնտեղ բնակվում էր օձերի թագաւորն իւր բոլոր զօրքերով. նրանք մեծ սարսափ էին գցել բերդի մօտակայքում եղած ողջ գիւղացւոց վերայ, այնպէս որ ոչ մի մարդ չէր համարձակվում այն բերդի մօտովն անց կենալ»։ Այժմ միայն բերդի և նրա դռների տեղերն են մնացել։

Սուլտուզի ազգաբնակութիւնն բաղկանում է մէկ մեծ մասը Քուստոստանի Թաթարներից, որ 100 տարի սրանից առաջ իրանց ընտանեօք և իշխանօք գաղթել են այստեղ, Քրդերից, Աորլիներից, Չրէքայներից և Հայերից։ Այս վերջիններիս թիւը հասնում է 200 տան, որ Թուրքերի մէջ բնակելուն համար՝ իրանց մայրենի լեզուն մոռացած՝ երբէք չեն տարբերվում Թուրքերից թէ՛ հագուստով և թէ լեզուով։ Հայոց գլխաւոր պարտքմունքն է երկրագործութիւնն. նրանք չունին վաճառականութիւն և ոչ էլ ուրիշ լաւ միջոց իրանց ապրուստը հայթհայթելու և դրա համար շատ խեղճ կեանք են վարում։ Սուլտուզի Հայերը այժմ ամենավատ վիճակի մէջ են և վախ կայ որ շատ ժամանակ չանցկացած՝ բոլորն էլ Թրքանան և իրանց սուրբ կրօնը Թողած մեծ մարգարէին պաշտեն։ Նախ այդ անմեղ Հայերը իրանց մայրենի լեզուն չեն իմանում և միւս գաւառաց Հայերի հետ ալ յարաբերութեան մէջ չեն, որ իմանան աղգութիւն և կրօնը։ Երկրորդ որ չունեն իրենց ուսումնարանները որ իրենց տղայք կրթուեն և աղգային պատմութեան և իրենց սուրբ կրօնի վերայ քիչ դաղափար կազմելով՝ փոքր առ փոքր Հայկական նորոգուած սերունդ կազմեն։ Երորդը՝ շատ աղքատ են և անգութ Թաթարներու ձեռում գերի գառած՝ շատ չարչարվում են։

ՀԱՅԵՐ Ի ՊՈՒՉԻՐ

Պուշիրէն (Պալոկալին ծոց) մեզ գրուած 3 մայիս թուով մի նամակէ կիմանանք որ այդտեղի 18 տունէ բաղկացած Հայ գաղթականութիւնն Զատկի կիրակի օրն Հանդուցեալ Հայրապետի Հոգեհանգստեան պաշտօնը կատարած է իր եկեղեցուն մէջ։

Նամակագիրը այդ առթով ցաւ կը յայտնէ որ գաղթականութիւնը Հոգ չտանիր իր մանուկ սերունդի Հայկական կրթութեանն և թէ ծնողք իրենց գաւակները Հնդկաստան կը գրկեն, ուր անգլիական վարժարանների մէջ անգլիական կրթութիւն մը ստանալով բոլորովին կը մոռնան իրենց ազգութիւն. Նոր-Զուղայէն անդադար Հոսող գաղթականութիւնն է

որ Հայութիւն կը պահէ տակաւին ի Պուշիր, ինչպէս և ի Հնգկաստան. եթէ դադրին նոր գաղթականներ գալ Նոր-Ջուղայէն, շուտով Հայութեան անունը կը մարի այդ կողմեր։

(Արտասահմանի մի հայ լրագրից)

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«Հատուածական օրացոյց» 1891, գինն է 50 կ.

«Սեղանի պատկերազարդ օրացոյց» 1891, գ. 30 կ.

«Օրացոյց կանանց համար» 1891, գ. 40 կ.

«Պատկերազարդ օրացոյց» 1891, գ. 15 կ.

«Ծոցի օրացոյց» 1891, գ. 5 կ.

Հրատարակութիւն «Ազբիւրի» և «Տարազի»։

—

Ներկայ տարուայ սկզբին հրատարակուեցան Թիֆլիզում չիշատակած հինգ տեսակ օրացոյցները մեծ և փոքր դիրքով։ Չարժէ խօսել այդ հրատարակութեանց իւրաքանչիւրի վերայ առանձնապէս, այլ կը ցանկայինք միայն ցոյց տալ՝ թէ ինչպէս մի և նոյն անձի հրատարակած հինգ տեսակ օրացոյցները տարբերւում են միմեանցից և՛ եկեղեցագիտական և՛ այլ սխալներով։

Վերցնենք հէնց առաջին երեսը։ Յայտնի է, որ Հայկայ շրջանի տարեթիւը ազգիս մէջ երկու տեսակ է գործածւում, ոմանք այդ հաշւում են 3998—3999 ներկայ տարին, իսկ աւելի նորագոյն հաշուով՝ 4383. այդ թուականը վերոյիշեալ հինգ օրացոյցների մէջ այսպէս է ներկայանում.

Սեղանի պատկ. օրացոյց «Հայկեան տիժ» (4383) թ.»

Հատուածական օրացոյց «Հայկեան տիժ» (4385) թ.»

Օրացոյց կանանց համար «Հայկեան տիժ» (4383) թ.»

Պատկերազարդ օրացոյց «Հայոց—3998—3999) թ.»

Ծոցի օրացոյց «Հայոց (3998—3999»)

Ձենք կարծում թէ այդ խառնակութիւնը անուշադրութեան սխալ կարողանայ համարուիլ, քանի որ թուականների մէջ ահագին տարբերութիւն կայ։

Մի կոլ-թողնենք միւս չորս օրացոյցները, որոնցից ոչ մէկը իւր ամբողջութեամբ նման չէ միւսին, և ցոյց տանք թէ որ աստիճան անսխալ է «1891 թ. հատուածական օրացոյցի» պարունակութիւնը։

Առհասարակ եկեղեցական ձայները ըստ-ուում են և միտք ունին այն օրացոյցների մէջ, որոնցում գրւում են և՛ եկեղեցական բոլոր տօները, վասնզի այդպիսով ընթերցողը հասկանում է, թէ որ տօնին ինչ պաշտամունք է կատարւում եկեղեցում։ «Ազբիւրի» օրացոյցում ձայներն անկատար գրուած են, իսկ տօներից միայն ոմանք, ուրեմն աւելորդ են և ձայները. մանաւանդ որ դոքա ըստ մեծի մասին սխալ են գրուած։

Չատ տեղերում տօները թերի են գրած, մի աններելի զանցառութիւն մանաւանդ բուն ազգային տօների վերաբերութեամբ. օրինակ «սրբոց որդւոց և թոռանց ս. Գրիգորի Լուսաւորչին՝ Արիստակիսի, Վրդանէսի և Դանիէլի» գրած է, իսկ «Յուսկան և Գրիգորիսին» բաց է թողած։

Ընհասարակ գրուած չեն «Հայկայ թուականի» ամիսների օրերը, բայց մէկ թէ երկու տեղ անակնկալ կերպով երևում են, օր. փետր. 1-ին, երբ հաշուով պիտի լինի «ոչ Ընդ չէ» գրուած է «ոչ. տղայ չէ». չգիտենք, թէ որտեղից և ինչ հրաշքով է ընկել այս երեսի վրայ Հայկայ թուականի ամսաթիւը, որ էլ ոչ մի երեսում չենք գտնում։

Տեղ տեղ թուղթը կանաչ գոյն է, բայց ոչինչ չիշատակութիւն չկայ նորա վերայ, թէ ինչ տօն է այն օրը։ Կան երեսներ, ուր չիշած են թէ «յերեկոյին նախատօնակ» է լինելու, բայց մեւս օրը ոչինչ չկայ գրած, թէ ինչ տօն է, այսպէս օրինակ դեկտ. 22-ին և 23-ին։

Չատ տեղ չէ յիշւում թէ բարեկենդան է, այսպէս՝ հայոց անդրանիկ պահքի «առաջաւորաց բարեկենդանը» փետրուարի 10-ին չէ յիշատակած։

Ձկան ամենևին խօսքեր, որպէս զի հասկացուի, թէ որ օրերը տօն են համարւում հայոց եկեղեցու կանոններով։

Վերջապէս այնքան շատ է զանցառութիւնների թիւն այդ օրացոյցի մէջ, որ մենք մի առ մի թուելով չենք ուզում ձանձրացնել ընթերցողին, միայն այսքանը կասենք, որ բաւական չէ լոկ հրատարակուած տեսնելու փափագ ունենալ և ժողովրդի ձեռքը սխալ-մխալ օրացոյցներ տալ, այլ պէտք է նաև անսխալ և բարեխիղճ աշխատութիւն ներկայացնել, մանաւանդ օրացուցի պէս մի հրատարակութիւն, որ պէտք է ժամանակագրական ճշտութիւն ունենայ և զերծ լինի եկեղեցական գիտելիքների թերութիւններից։

ԿՈՐԻՒՆ,

ՄԵՐ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

ՅԱՒԵՐԺԱՀԱՐՍԻ ՎԻՇՏԸ

(Տես պատկեր երես 241)

Ներկայ համարում տալիս ենք հռչակաւոր ֆ. Էննեի պատկերը «Յաւերժահարսի վիշտը», որ կազմում է Մոսկուայի Ներկայ Ֆրանսիական ցուցահանդեսի ամենագեղեցիկ զարդերից մէկը։ Գեղերի, աղբիւրների, անտառների, լեռների և մարզապետինների այս աստուածուհին խորին վշտի մէջ է գտնւում. այն ահագին տարածութիւնը, որի վրայ նա իշխում է, պոհութիւն չեն տուել նորան։ Նա պատհանջ է զգացել սիրելու և ահա նկարիչը առաջ է բերում այն րոպէ, երբ մարդը — կենդանեաց այս թագուորը մերժել է բնութեան թագուհու սէրը։ Նա հանդիսանում է մերկ մեր աչքերի առաջ, բայց տաղանդաւոր նկարչի վրձինը այդ մերկութեանը մի կուսական ոսկի է տուել, և ինչպէս շատ ճիշտ նկատում է մի կրիտիկոս. «Վշտիցը նա ծածկել է իր դէմքը և մենք թէև չենք տեսնում Յաւերժահարսի կերպարանքը, բայց նոյն իսկ մարմնի դիրքը, որ կարծես ցնցում է, ցոյց է տալիս նորա սրտի թափիծը»։

ՁԱՆԱՁԱՆ

ԸՍ ՉԵՌՆ ԵՒ ՁԱԽ ՈՏՆ

—

Հասարակաց և ընդհանուր կարծիք է՝ որ ինչպէս աջ ձեռքը աւելի յաջող և պործաճական է յաշխատութիւնս՝ որով և աւելի ուժով, այսպէս նաև աջ ոտքը աւելի ուժով է քան զձախն։ Այս կարծիքը լաւ քննելով կը տեսնենք որ անհիմն է, և նոյն իսկ կրնանք ապացուցանել՝ որ շատ անգամ ձախ ոտքն աւելի ուժով է քան զաջն։ Նոյն իսկ հայևանցի կերպով նկատելով՝ երբ աջ ձեռքը ետևէ է ծաննըր աշխատութեան մը՝ սէտք է ըստ լինքեան ձախ ոտքը գործածել հաւասարակշռութեան համար, այնպէս որ երբ ոտքի մը վերայ կեցած կ'աշխատի ոք աջ ձեռքով, միևնոյն ժամանակ բնական բերմամբ կը ջանայ գործածել ձախ ոտքը. համաւօտիւ, աջ ձեռքին իւրաքանչիւր շարժման, հակամիտութիւն մը կ'զգայ մարդս շարժելու ձախ ոտքը։ Ընդհանրապէս դրել սորվող տղան՝ մատերուն հետ միանգամայն կը շարժէ լեզուն և մարմնոյ զանազան մասունքը։ Նոյն իսկ կրնանք ըսել թէ աջ ձեռքով գրելու ժամանակ՝ ձախ ոտքն ալ շարժումներ կ'ընէ. իսկ այս շարժմունքն լաւագոյն կերպով կը տեսնուին՝ երբոր շրջապատութեան ատեն գաւազանով խաղանք, այն ժամանակ աջ ձեռին շարժմունքը՝ համապատասխան կ'ըլլան ձախ սրունքից շարժմանց։ Այսպէս նոր ոտք ելած քառոտանի կենդանեաց վրայ ալ կը տեսնենք՝ որ առջևի աջ ոտքը կը շարժի համապատասխան կերպով ետևի ձախ ոտքին, և փոխադարձաբար։

Ուստի հետևաբար, որովհետև մարդս աւելի աջ ձեռքը կը գործածէ քան թէ ձախը, հաւանական է թէ ձախ սրունքը աւելի գործածէ քան թէ աջը։ Եւ շատերն աւելի դիւրաւ դէպ յաջակողմն քան թէ ի ձախ կրնան դառնալ, և այս պատճառաւ ձիընթացից մէջ ալ ամենայն ինչ այնպէս կը կարգադրուի՝ որ կրկիսին մէջ ձիք աւելի դէպ ի աջ վազեն։ Ձատ անձինք՝ որ սառի վրայ սահելով զանազան խաղեր կ'ընեն աւելի ձախ ոտից քան թէ աջոյն վրայ կը կատարեն զանոնք, մինով բանիւ՝ ի սկզբան դիւրագոյն է ձախ ոտքը գործածել անոնց մէջ։ Լարախաղացներու շարժմանց մէջ գործարագոյնն է ձախ ոտքին վրայ հաւասարակշռութիւնն։ Ընդհանրապէս պարելու մէջ ալ դէպ յաջ կը դարձուի, սակաւ կը յաջողին անոր հակառակը կատարելու։ Հազուելու ատեն ալ շատերը նախ ձախ ոտքը կ'անցընեն զգուլպան, և ոմանք կը պնդեն և՛ որ եթէ դիպուածով նախ աջ ոտքը անցուցեր են, կը բռնադատուին հանել զայն և ըստ սովորութեան հագուիլ։

Աշխարհիս ամեն կողմը ընդհանուր կանոն մ'է՝ աջը միշտ վերադասել քալելու ատեն։ Արդ ասոր պատճառն ինչ է։ Ցիրաւի հետաքրքրական բան մ'է, սակայն շատերն կան որ առանց գիտնալու իսկ այս ընդհանուր կանոնը՝ կը պահեն զայն ճշտիւ։ Սիսլէյ այս նիւթիս համար շատ հարցումներ ըրած է ոամկին, բայց գոհացուցիչ պատասխան մի ընդունած չէ. և նոյն իսկ քաղաքակիրթ մարդկանց շատերը չեն կրնար այս հարցմանս պատասխանել ճշգրտութեամբ։ Ուստի յայտնի է՝ թէ այս աջոյն վերադասութեան ծագումն՝ կանոն մի չէ, այլ պէտք է ուրիշ պատճառ մ' ըլլայ. և բացասկէ՝ եթէ կայ այսպիսի ընդհանուր կանոն մի, հարկ է որ այդ կանոնը ընդհանուր ծագում մ' ալ ունենայ։ Կ'ըսուի թէ ձախ սրունքն աւելի զօրաւոր ըլլալով՝ միշտ հակամիտեալ ենք դէպ յաջն. և յայսմ է ծագումն ընդհանուր կանոնին։ Այս նիւթիս նկատմամբ շատերուն տուած պատասխանը աւելի կը պայծառացնեն խնդիրը. «Կանոն մի չեմ գիտեր, թէպէտ և միշտ յաջ կը դիմեմ, այս աւելի բնական կ'երեւի ինձ». և այլ ասոր նման պատասխաններ կուտան։ Եւ յաճախ կը տեսնուի այս բանիս բնական ըլլալն. ժողովուրդը միշտ դէպ յաջակողմն կ'ընթանայ. այսպէս Փարիզու աշխարհանդիսին ատեն երկու փայտեայ կամուրջներ շինուեցան, և պատճառաւ մի քաղաքական իշխանութիւնը պատուիրեց որ ձախ կողմէն անցնի բազմութիւնը, սակայն սա միշտ դէպ յաջակողմ կընթանար՝ սեծ շփոթութիւն հանելով։

Ձախ սրունքն աւելի զօրաւոր ըլլալուն պատճառաւ, բնական է մարդու՝ տալչէն աւելի զայն գործածել։ Այսպէս յԱնգլիա, ի Գերմանիա, ի Գաղղիա և յԻտալիա միշտ ձախ ոտքով կ'ընթանան դունդք զօրաց։ Եւ ինչպէս աջ ձեռքը աւելի արագութեամբ կը գործածուի, նոյն բանը կը տեսնուի ձախ ոտից վրայ, նոյնպէս ձիու կամ արագոտն մեքենայի վրայ ելնելու ատեն, ձախ ոտը աստղանդակի վրայ կը դրուի։ Իսկ արագոտն մեքենայից ընթացից և վարժութեանց ատեն՝ ընդհանրապէս դէպ ի ձախ կողմն դարձին պատճառն այս է թերևս՝ որ ձախ սրունքն աւելի ուժով ըլլալով, դիւրագոյն ըլլալով, դիւրագոյն է մեքենայն դէպ ի ձախ դարձնելն։

Յատքելու ատեն շատերն ձախ ոտքով կը նետուին։ Լողացման մէջ բազումք մարմնոյն աջ կողմը դէպի վար կը բռնեն հաւասարակշռութիւն պահելու համար, և միևնոյն ժամանակ կը գործածեն գլխաւոր մղիչ զօրութիւնը, որ է ձախ սրունքն։

Կարևոր է դիտել և՛ որ ըստ Պաւնումի, հենդնաբար խօսելով՝ առանց թևոց մարդ մի աւելի ձախ է քան թէ աջ, այսինքն, ամեն բանէ առաջ ձախ ոտքը կը գործածէ։ Գրելու և նկարելու ատեն գրիչը և վրձինը ձախ ոտից մատանց մէջ կ'անցնի, և եթէ հարցնես՝ թէ ինչ է ասոր պատճառն, կը պատասխանէ՝ թէ ես ալ չեմ գիտեր, բայց բնական մ'է։ Այս բանս փորձով հաստատուած է։

Տարվին քանի մը տարիէ ի վեր հետևեալ դիտողութիւնքն ըրած է։ Սա ութ դպրոցական տղայ ժողվեց, տասերկու տարեկան, և աչքերը կապած շիտակ քալել կրցողներուն մէյմէկ շիլին տակ տուաւ։ Սակայն այս մըրցմանէ առաջ գետնոյ վրայ սակաւ մի փայտի թեփ տարածեց, և տղայոց քալելէն ետքը, անոնց ի ձախոյ դէպ յաջ և փոխադարձ քայլերն չափեց։ Կ'ըսէ՝ քար նետելու ատեն ամենքը աջ ձեռքը կը գործածէին, և երկուքը միայն ձախի նշան մի կուտային։ Վեց ուղղաձեռն տղաք երկայն քայլեր առին ի ձախոյ դէպ յաջ և ձախ ոտքով ցատքեցին։ Ապա զանոնք դաշտ մը տանելով՝ հոն գաւազան մի տնկեց բառասուն քայլի չափ հեռու, և աչ-

քերլին կապելով՝ ինքը քանի մը քայլ առաջ տարաւ վիրենք, և չետոյ ձգեց որ ինքիրեցմէ երթան դէպ ի գաւազանն, տեսաւ որ ուղղաձեռն տղաք դէպ յաջ խոտորեցան, իսկ միւս երկու ձախաձեռինք դէպի ի ձախ։— Տարվին կը յաւելու՝ թէ իրեն և իւր բարեկամայ վրայ ալ նոյն բանը փորձեց, և յամենքը դէպ յաջ խորտորեցան բայց ի միոյն՝ որ յայտնապէս ձախ էր։

Պալով երկու սրունկից չափին, Կարսոնի քննութեանց համեմատ՝ կորս ըրած է եօթանասուն կմախքի վրայ, ձախը երկայնագոյն է քան զաջն։ Ըստ Սիպլէյի ձախ ոտքը երկայնագոյն և լայնագոյն է քան զաջն։

Երկ աչ ձեռաց և ձախ ոտից չաճախագոյն գործածութեան երևութէն կը հետևի՝ թէ բնութիւնն ըստ կարելւոյն կը ջանայ երկակողմանի անհատներ յառաջ բերել։ Եւ եթէ նա՝ միայն աչակողմեան գործածութեան դիմէր՝ շուտով ամենքնիս ալ միակողմանի կ'ըլլայինք։ Այսու, մէկտ բարձրագոյն կարգի կենդանեաց զարգացման մէջ բերում մի կայ դէպ յանչափակցութիւն, սակայն արտաքին չափակցութիւնը միշտ կը պահուի՝ ձախակողմեան և աչակողմեան գործարանաց ոմանց համեմատական աճմամբն։

«Բազմաչեզ»

Խմբագիր՝ ԱՒԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
Տնօրէն՝ Ն. ՅԱՐՈՅ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ՓԵՐԴ. ՉՄԻԳԹ
ՈՒԻՅՆԵԿԻ ՍԼՈՒԻՍԸ
դերմ. Թարգմ.
ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ
ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.
Ճանապարհի Ծախքով։

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԴՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՆՈՐ ԳՐՔԵՐԸ. —

	Ռ.	Կ.
ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ղուշան, օպերա երեք արարուածով	1	—
ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ Գ., Բարեպաշտ մարդիկ, առակ չափահասների համար	—	60
ԷԴԳԲԷՆ-ԼԷՖԼԷՐ, Մրցումն հասարակութեան հետ	—	40
ԼԵՐՄՕՆԴՕՖ, Գեւ, պատկերներով	—	30
» Դիմակահանդէս, դրամա չորս արարուածով	—	50
ՈՒԻԳԱ, Ցեց. վէպ.	—	80
ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ բժ. (Թիֆլիսեցի), Հանրամատչելի բժշկարան I տետր	—	70

ГЮГО В.. Человѣкъ который смѣется 2 —
ЛЕСЕВИЧЪ. Что такое научная филисофія?—Этюдъ 2 —
МАРКОВЪ. Путешествіе по святой землѣ 2 25
СМАЙЛЬСЪ. Умъ и энергія 1 50
ХОДСКІЙ. Земля и земледѣлецъ. Экономическое изслѣдованіе 2 т. 5 —

ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ

ՉՈՒՐ ՅՈՅՍԵՐ

ՎԷՊ

ԳԻՆՆ Է ԹԻՖԼԻԶՈՒՄ 1 Ռ.

Ձանապարհածախսով 1 ռուբլի 25 կոպէկ։

Վաճառվում է հեղինակի մօտ։

Тифлисъ. **Ширваназдэ.**

Թիֆլիզի Հայոց Հրատարակչական ընկերութեան Հրատարակութեամբ լոյս տեսան Հետևեալ գրքոյկները.

1. Եօհաննա Սպիրի «Վարպ — Բէսլին», դերմ. Թարգ. Ի. Յ. գինն է 10 կոպէկ։

2. Կոմս Լ. Տոլստոյի «Ամուսած գիտէ արդարն ու մեղաւորը, բայց պատաստանը շուտ չի անում», Թարգմ. Մ. Ա. գինն է 7 կոպէկ։

3. Գ. Վալդնէրի «Հաւատարիմ Սավիտրին», Հնդկական վէպ, դերմ. Թարգմանեց Փ. Վարդանեան։ Գինն է 10 կոպէկ։

Վաճառվում են կենդրոնական դրավաճառանոցում։

ՀԱՆԳԷՍ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ

Լոյս է տեսնում տարէկնը երկու գիրք։

Ի-բրագնչի-ր տարեկան 2 ր.

Հասցէն՝ Москва, Газетный пер. д. Ліанозова. Типог. М. Бархударьянъ.

Կենդրոնական դրավաճառանոցի հրատարակութեամբ տպագրվում է Գրիգորիս Երզնկեանցի պատգիրք «ԹՈՒՐՔԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ և ՕՐԻՆԱԿՆԵՐԻ» տարրական դասընթացք, առաջին և երկրորդ տարի։

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՄԱՄ

վաճառվում են ի միջի այլոց հետևեալ

ՆՈՐ ԳՐՔԵՐՔ

ՍԵԴՐԱԿԵԱՆ, Ամուսնական խնդիրներ, գ. 1 ռ.
ՔԻՉՄԻՉԵԱՆՑ, Բոյսերի մեծարանքը, գ. 15 կ.
ՁՄԻՏՏ, Նալ և Պամայեանթի, գ. 20 կ.
ՀԱՅԶԻ, Նօնցայի բերդը, գ. 30 կ.
» Բէաթրիչէ, գ. 30 կ.
ՏՕԼՍՏՈՅ, Ռոբինզօն, գ. 20 կ.
» Կոլոմբ, գ. 15 կ.
ԼԵՐՄՈՆՏՕՎ, Դիմակահանդէս, գ. 50 կ.
ԲԱՒԹՐԵԱՆՑ, Հին Հայոց տաղաչափական արուեստը, գ. 50 կ.
ԼԷՕ, Քննադատութիւն «Դաւիթ և Մհերի», գ. 15 կ.
ՀԱՆԴԻՍ գրականական և պատմական, դիրք IV, գ. 2 ռ.
ԵՏՐՊԵՏԵԱՆ, Ջուշան. Օպերա, գ. 1 ռ.

ГЮЙО, Воспитаніе и наслѣдственность, соціологическій этюдъ. Ц. 1 р. 50 к.
„ Происхожденіе идеи времени. Психологическій этюдъ. Ц. 75 к.
„ Задачи современной эстетики Ц. 1 р.
ЛОККЪ, Мысли о воспитаніи. Ц. 1 р.
ПБЕРВЕГЪ-ГЕЙЦЕ, Исторія новой философіи. Ц. 5 р.
ХОХРЯКОВЪ, Языкъ и психологія. Ц. 1 р. 50 к.
МАРТЭНЪ, О воспитаніи характера. Ц. 1 р. 50 к.

Ձանապարհածախսը գնողների վրայ է։

ՀԱՅԵՐԷՆ ՌՈՒՍԵՐԷՆ

ԲԱՌԱՐԱՆ

Բամուլի տակ է և մօտաւորապէս եկող ամսուայ վերջին լոյս կը տեսնի վերոյիշեալ աշխատութիւնը։ **ՀԱՅԵՐԷՆ—ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԳԻՐՔԸ** արդի աշխարհաբար լեզուով բառարանէ, բաղկացած կը լինի 18—20 in 32⁰ տպագրական թերթերից (576—640 երկսիւնեակ երես, մանր № 8 տառերով 43-ական տող ամեն մի սիւնակը)։ Բառարանի յառաջաբանը կը լինի Հայոց լեզուի քերականութեան համառօտ սկզբունքները։

Բաժանորդագրութիւնը (Թիֆլիսի կենդր. գլխաճ. և նորա գործակալների միջնորդութեամբ։ Թիֆլիսում մէկ րուբլի է, իսկ ճանապարհածախքը հետը 1 ր. 25 կ.։ Լոյս տեսնելուց յետոյ «**ՀԱՅԵՐԷՆ—ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆԸ**» կ'արժէ երկու րուբլի։

Այժմ դուրս է եկել 27 թերթ։ **ՀԱՅԵՐԷՆ-ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆԸ**» աշխատասիրել է **ԿԱՐԱՊԵՏ ԵԱՂՈՒԲԵԱՆՑԸ**, մի քանի մասնագէտների օգնութեամբ։

Բաժանորդագրութիւնը շարունակվում է

11

Ոսկեայ մեդալ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԲՕՋԱՐՃԱՆ

Ոսկեայ մեդալ



ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԻՖԼԻԶՈՒՄ

Առաջարկում եմ պ. պ. ցանկացողներին ընտիր ծխախոտն և պապիրոսները իմ գործարանի, որ ունի ֆաճկական և տեղական ընտիր և թարմ ծխախոտների պաշար։ Պատուէրները կատարվում են գործածողների ճաշակի համեմատ և ճշտութեամբ։ Իմ մագազինում կան ծխելու համար ամենալաւ գործիքներ և առարկաներ։ Օտար քաղաքներից ստացուած պատուէրները կատարվում են անյապաղ։

Գործարանիս գլխաւոր մագազինը գտնվում է Վլադիմիրովսկայա փողոցում Թիֆլիզի ազնուականների բանկի, նախկին Արծրունու, քարվանսարայում։

27—28.

„ՐՕՍԻԱ“

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1881 Թ. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, ՄԵԾ ՄՕՐՍԿԱՅԻՆ № 13.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ 11,000,000 ՐՈՒԲԼԻ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

Ձեռնտու պայմաններով և ապահովողների մասնակցութեամբ Ընկերութեան շահերին

ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ ԴԺԲԱԽՏԻ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ

Ինչպէս առանձին անձինքների, նոյնպէս և հաւաքական ապահովութիւն գործարաններում ծառայողների և բանուորների,—ապահովութեան վճարների կրճատումով դիվիդենդի շնորհիւ։

ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՀԻ ԴԷՄ

Ամենայն տեսակ շարժական և անշարժ գոյքերի

ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ ՏՐԱՆՍՊՕՐՏՆԵՐԻ

ԳԵՏԱՅԻՆ, ՑԱՄԲԱՔԱՅԻՆ ԵՒ ԾՈՎԱՅԻՆ.

Այն անձինքը, որոնք կամենում են ապահովել կամ պանապան տեղեկութիւններ ստանալ պէտք է դիմեն վարչութեանը Պետերբուրգում (Մեծ Մօրսկայա, № 13) կամ գործակալ Վ. Լ. Պօտկովին և Ե. Բ. Գօլդֆարբին Թիֆլիզում (Սօլօլակի փող. տուն իշխան Մելիքօվի, № 10). և կամ Կայսրութեան այլ քաղաքներում գտնուող գործակալներին։

Երկաթուղիներով և շոգենաւների վրայ ճանապարհորդողներին դժբաղդ պատահարների դէմ ապահովելու տոմսակները կարելի է նոյնպէս ստանալ երկաթուղու կայարաններում, շոգենաւների գրասենեակներում և Ռուսաստանի քաղաքների գլխաւոր հիւրանոցներում։

Ամենայն տեսակ բրոշիւրներ ուղարկվում են պահանջողներին ձրիաբար։ 23

«ԸՐՆԹՈՒ» ԴԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՎԵՑԱՄՍԵՑՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ ՀԱՆԴԷՍ

—

Ձուտով կուղարկուի բաժանորդներին դէպքերի բերմամբ ուշացած անցեալ տարուայ երկրորդ գիրքը Հարուստ բովանդակութեամբ և 19 շքեղատիպ նկարներով։

Այս գրքում առաջին անգամ մտնակցում են. Գամառ-Քաթիպա, Սիլիվկ, Գր. և այլն անուանի գրագէտները։

Գեղարուեստական բաժնում մտնակցում են. Այվազովսկի, Սեմիրադսկի, Կ. Մակալսկի, Գ. Բաշինջաղեան, Էմ. Մեղրեանց և տիկին Կուրլաև։ Նկարները պատրաստուած են մտնաւոր պատուէրով արտասահման։

Այվազովսկու նշանաւոր գործերից գեաեղած ենք.

«Ջրհեղեղից յետոյ» յայտնի նկարը, որ պատկերացնում է այն միջոցը, երբ Նոյ նահապետը իւր որդկանցով, թռուներով իջնում է Մասիսից Արարատեան գաշար, ուր գեռ հողի մակերևոյթի վերայ տեղ տեղ վազում էր ջուրը արագութեամբ։

Նոր ստորագրուողներից խնդրում ենք շտապել, որպէսզի ամառուան մեր բացակայութեան պատճառով պատուէրների կատարումը առանց այն էլ չուշանայ։

Առաջին և երկրորդ գրքի բաժանորդագինն է ճանապարհածախսով 3 րուբլի։

Բացուած է և 1891 թ. բաժանորդագրութիւնը։ Գրքերը կը հրատարակուին մինչև տարուան վերջը, որպէս զի միւս տարի «Արաքսը» հրատարակուի կանոնաւոր կերպով։

Դիմելու է այսպէս մտյն. С. Петербургъ. С. Гуламирянцу.

ԼՈՅՍ ՏԵՍԱԼ

ԵՒ ՎԱՃԱՌՔՈՒՄ Է

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ

ԿԱՐՆՈՅ ԳԱՂԹԸ

պատմական տեսութիւն

Գէորգ Տէր-Գրիգորեանց

(Արտատպած «Արձագանք» շաբաթաթերթից)

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊԻԿ։

Լոյս տեսաւ և ապահոված բանդերոլով ուղարկուեց բոլոր բաժանորդներին

ՀԱՆՐԱՄԱՏՈՒՅԵԼԻ ԲԺՇԿԱՐԱՆԻ

Առաջին հատորի ԸՌՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՏՐԱԿԸ։ Բովանդակութիւն։— Ազգ.—Յառաջաբան.— Միկրոբներ.—Դէպիդեմիկական միջոցներ և նրանց գործադրութեան եղանակը.—Սրընթաց վարակիչ կարմրախտներ։ 1) Քութէշ (скарлатина). 2) Կարմրուկ (корь). 3) Կեղծ կարմրուկ (краснуха). 4) Ծաղիկ (оспа). 5) Ծաղկի պատուաստումը (оспопрививаніе). 6) Քրծաղիկ (вѣтряная оспа). 7) Քութէշ, կարմրուկ ու ծաղիկ հիւանդութիւնների գլխաւոր որոշիչ յատկութիւնները. 8) Կարմիր քամի (рожа). 9) Բծաւոր տիֆ (сыпной тифъ)։

Առաջին տետրակի գինն է 70 կոպ. ամենայն տեղ։ Մի օրինակ պահանջողները փողի փոխարէն կարող են ուղարկել երեսուն և հինգ հատ երկու կոպէկանոց մարկա։

«Հանրամատչելի բժշկարանը» կըհրատարակուի երկու հատորով, իւրաքանչիւր հատորը բաղկացած կըլինի 22—23 տպագրական թերթից (44 տող իւրաքանչիւր երեսում 6½ կվադրատ տողերի երկարութիւնը № 10 տառով)։

Բաժանորդագրութիւնը շարունակվում է. 45 թերթից 720 երեսից բաղկացած երկու հատորի գինը ԵՐԵՔ ռուբլի է։ Մեր բաժանորդները հրատարակութիւնը կըստանան մաս-մաս 5—8 թերթ իւրաքանչիւր տետրակում։

Առանձին տետրակները կըվաճառուեն թերթը 10—15 կոպ. հաշուելով։

Մեր հասցէն. Въ гор. Тифлисъ, Доктору Медицины Григорію Никитичу Теръ-Григорьянцъ, Саперная улица, № 7.

Բժշկապետ Գրիգոր Տէր-Գրիգորեանց (Թիֆլիսեցի։

3—2

ПРОДОЛЖАЕТСЯ ПОДПИСКА НА 1891 ГОДЪ

НА БОЛЬШУЮ ПОЛИТИЧЕСКУЮ, ЭКОНОМИЧЕСКУЮ и ЛИТЕРАТУРНУЮ ГАЗЕТУ

„ПРАВДА“

“ГАЗЕТА., дѣлится на ТРИ большихъ вполнѣ самостоятельныхъ ОТДѢЛА: политико-экономическій, научный и литературный.

Подписчики газеты „ПРАВДА“ за 6 р. въ годъ получаютъ:

52 НОМЕРА ГАЗЕТЫ, **ЕЖЕНЕДѢЛЬНО,** каждый номеръ въ 2—4 и болѣе листовъ большаго формата въ 8—12 и болѣе страницъ и каждая страница изъ **трехъ** столбцовъ, такъ что въ одномъ номерѣ будетъ отъ 24 до 36 и болѣе столбцовъ сплошнаго текста убористой печати съ разнообразнѣйшими статьями. КРОМѢ ТОГО ВЗАМѢНЪ РАЗНЫХЪ ДЕШЕВЫХЪ ПРИЛОЖЕНІЙ

52 НОМЕРА отдѣльно отъ газеты, **ЕЖЕНЕДѢЛЬНО**, каждый въ ДВА и болѣе листовъ большаго формата въ 32 и болѣе столбцовъ убористой печати, содержащихъ цѣльный рядъ **НОВЫХЪ ЗАКОНЧЕННЫХЪ РОМАНОВЪ** выдающихся писателей, съ такимъ разсчетомъ, чтобы въ трехъ—пяти номерахъ помѣщался **только** одинъ сплошной романъ безъ всякихъ раздробленій. Такимъ образомъ подписчики получатъ:

Большую газету и цѣнную библіотеку избраннѣйшихъ романовъ.

Въ особомъ литературномъ отдѣлѣ уже напечатаны весьма цѣнныя новыя литературныя произведенія, заставившія о себѣ говорить всю Европу:

ПОДПИСНАЯ ЦѢНА { въ **С.-ПБ.** и во всѣ мѣста **Имперіи** на г. 6 р., полг. 4 р., на 1 мѣс. 1 р., **съ доставк. и перес.** { **за границу** { въ славянскія земли и во всѣ другія государства . . . 10 р., „ 6 р., „ „ „ 1 р.

NB. Выписывающіе 10 экземпляровъ получаютъ одинъ экземпляръ газеты безплатно.

Подп. прин. исключительно въ **ГЛАВНОЙ КОНТОРѢ ГАЗЕТЫ „ПРАВДА“**, С.-Петербургъ, Невскій пр. 98.

Издатель-редакторъ газеты „Правда“ **И. Н. Подлигайловъ.**

Дозволено цензурою, Тифлисъ, 20 Іюня 1891 г. Տպարան Յ. Մարտիրոսեանցի։ Типографія И. Мартиросіанца, Орб. ул , д. № 1—2